



ՆԱՅԱՍԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

NATIONAL
LIBRARY OF ARMENIA

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ

BULLETIN

OF ARMENIAN LIBRARIES

2025 (1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

*ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

2025 (1)

ԵՐԵՎԱՆ
«ԳԻՐՔ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

NATIONAL LIBRARY OF ARMENIA

***BULLETIN OF ARMENIAN LIBRARIES
SCIENTIFIC-METHODICAL JOURNAL***

2025 (1)

**YEREVAN
“GIRK” PUBLISHING HOUSE
2025**

НАЦИОНАЛЬНАЯ БИБЛИОТЕКА АРМЕНИИ

***ВЕСТНИК БИБЛИОТЕК АРМЕНИИ
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ***

2025 (1)

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИРК»
2025**

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ
Հրատարակությունը երաշխավորված է Հայաստանի
ազգային գրադարանի գիտական խորհրդի կողմից

Գլխավոր խմբագիր՝
Զուլյան Աննա

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Պատասխանատու խմբագիր՝
Ղազարյան Հայկանուշ

Ավդոյան Լևոն
Զարգարյան Տիգրան
Էլիազյան Գայանե
Լիզունովա Իրինա
Համբարձումյան Հայկ
Հովհաննիսյան Գայանե
Կուչմա Իրինա

Մուրադյան Խաչիկ
Տեր Արարատ Պողոսյան
Ռեսպոնդենտ Անջելա

Սահակյան Վահե
Սուքիասյան Գագիկ

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրենի տե-
ղակալ գիտական գծով
Պատմական գիտությունների դոկտոր
Տեխնիկական գիտությունների թեկնածու
Քիմիական գիտությունների թեկնածու
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բանասիրական գիտությունների թեկնածու
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հանրահասանելի գիտության և տեղեկատվության փորձա-
գետ
Պատմական գիտությունների դոկտոր
Պատմական գիտությունների թեկնածու
Տեխնիկական գիտությունների դոկտոր, մարքեթինգի դոկ-
տոր
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Տեխնիկական խմբագիր՝
Զոհրաբյան Սառա

Ավետյան Նորա
Բոյաջյան Անի
Հայրապետյան Ներսես
Շիրինյան Աննա
Տոնոյան Ռուզան

*Բանբեր Հայաստանի գրադարանների գիտամեթոդական հանդեսի հրատարակությունը (2015-2019 թթ.) շարունակվում է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի գիտխորհրդի 2021 թվականի հունիսի 10-ի նիստի որոշման համաձայն: 2025 թվականի առաջին թողարկումը ներառում է հոդվածներ հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ Ազգային ժառանգության պահպանություն, Թվային բովանդակության կառավարում, Կառավարում և մասնագիտական զարգացում, Սիյուլոգի ժառանգության պահպանություն և հանրահոշակում: Հանդեսը նախատեսված է գրադարանագիտու-
թյան, մատենագիտության, թանգարանագիտության, հումանիտար գիտությունների ոլորտի մասնա-
գետների համար:*

ISSN 1829-4685

PUBLISHED SINCE 2015
FREQUENTLY: TWICE A YEAR

The publication is guaranteed by the Scientific Council
of the National Library of Armenia

Editor-in-Chief

Chulyan Anna

Candidate of Sciences in Philology, Associate
Professor

EDITORIAL BOARD

Responsible Editor

Ghazaryan Haykanush

Avdoyan Levon
Zargaryan Tigran
Eliazaryan Gayane
Lizunova Iryna
Hambardzumyan Hayk
Hovhannisyan Gayane
Kuchma Iryna
Mouradian Khatchig
Fr. Ararat Poghosyan
Repanovici Angela

Sahakyan Vahe
Sukiasyan Gagik

Deputy Director for Science of the “National
Library of Armenia” SNCO
Doctor of Sciences in History
Candidate of Sciences in Technology
Candidate of Sciences in Chemistry
Doctor of Sciences in History, Professor
Candidate of Sciences in Philology
Doctor of Sciences in Philology, Professor
Open Science and Open Access Expert
Doctor of Sciences in History
Candidate of Sciences in History
Doctor of Engineering Sciences, Doctor of
Marketing
Doctor of Sciences in Sociology
Doctor of Sciences in Pedagogy, Professor

EDITORIAL STAFF

Technical Editor

Zohrabyan Sara

Avetyan Nora
Boyadjian Ani
Hayrapetyan Nerses
Shirinyan Anna
Tonoyan Ruzan

The publication of Bulletin of Armenian Libraries, the scientific methodical journal (2015-2019), continues according to the decision of the Scientific Council of the National Library of Armenia on June 10, 2021. The first issue of 2025 includes articles in following sections: National Heritage Preservation, Digital Content Management, Management & Professional Development, Diaspora Heritage Preservation & Promotion. The journal is meant for experts in the fields of library science, bibliography, museology and humanities.

Главный редактор

Чулян Анна

Кандидат филологических наук, доцент

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Ответственный редактор

Казарян Айкануш

Заместитель директора ГНКО «Национальная библиотека Армении» по научной деятельности

Авдоян Левон

Доктор исторических наук

Заргарян Тигран

Кандидат технических наук

Элиазян Гаяне

Кандидат химических наук

Лизунова Ирина

Доктор исторических наук, профессор

Амбардзумян Айк

Кандидат филологических наук

Оганесян Гаяне

Доктор филологических наук, профессор

Кучма Ирина

Эксперт по Открытой науке и Открытому доступу

Мурадян Хачик

Доктор исторических наук

Иерей Арарат Погосян

Кандидат исторических наук

Репанович Анжела

Доктор технических наук, доктор по маркетингу

Саакян Ваге

Кандидат социологических наук

Сукиасян Гагик

Доктор педагогических наук, профессор

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Технический редактор

Зограбян Сара

Аветян Нора

Бояджян Ани

Айрапетян Нерсес

Ширинян Анна

Тоноян Рузан

Издание научно-методического журнала «Вестник библиотек Армении» (2015–2019 гг.) продолжается согласно решению Ученого совета Национальной библиотеки Армении от 10 июня 2021 года. В первый выпуск 2025 г. включены научные статьи, которые представлены в следующих разделах: Сохранение национального наследия, Управление цифровым контентом, Управление и профессиональное развитие, Сохранение и популяризация наследия диаспоры. Журнал предназначен для специалистов в области библиотечного дела, библиографии, музееведения и гуманитарных наук.



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

Հարգելի՛ գործընկեր, սիրելի՛ ընթերցող,

Ներկայացնում ենք «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսի 2025 թվականի առաջին թողարկումը՝ շարունակելով մասնագիտական համայնքի հետ գիտական երկխոսության և համագործակցության ձևավորված ավանդույթը:

Հանդեսում ներկայացված հոդվածները լուսաբանում են ժամանակակից գրադարանագիտության և տեղեկատվական կառավարման հիմնախնդիրների լայն շրջանակ՝ համադրելով ազգային ժառանգության պահպանման գործին միտված տեղական փորձը և միջազգային առաջադեմ լուծումները: Հատուկ անդրադարձ է կատարվում թվայնացման ռազմավարություններին, մշակութային արժեքների թվային հասանելիության ապահովման մոդելներին, տեղեկատվական անվտանգությանը, ինչպես նաև արհեստական բանականության և ժամանակակից գործիքների կիրառմանն՝ ինչպես միջազգային, այնպես էլ հայկական գրադարանային փորձի համատեքստում:

Հանդեսի այս թողարկման հոդվածները ներկայացված են հետևյալ թեմատիկ բաժիններում՝ Ազգային ժառանգության պահպանում, Թվային բովանդակության կառավարում, Կառավարում և մասնագիտական զարգացում, Սփյուռքի ժառանգության հանրահռչակում: Յուրաքանչյուր բաժնում ներկայացված են առաջարկում է տեսական ընդհանրացումներ և գործնական լուծումների առաջարկներ, որոնք նպաստում են գրադարանների արդիականացման և գիտամշակութային առաքելության խորացման գործընթացին:

«Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսը շարունակում է մնալ գրադարանային և հարակից ոլորտների մասնագիտական հանրույթի համախմբման կարևոր հարթակներից մեկը՝ խթանելով գիտամեթոդական փորձի փոխանակումը, գրադարանային քաղաքականության և ոլորտային համագործակցության զարգացումը:

Լիաժողովուրդ ենք, որ հանդեսի այս թողարկումը իր բովանդակային ընդգրկմամբ կնպաստի գրադարանային գործի նորարարական միտումների խթանմանը, մասնագիտական հեռանկարների ընդլայնմանը և արդի մոտեցումների արմատավորմանը:

«Բանբեր Հայաստանի գրադարանների»
Էլեկտրոնային հանդեսի գլխավոր խմբագիր
Բ.Գ.Թ., դոցենտ Աննա Չուլյան

NOTE FROM THE EDITOR-IN-CHIEF

Dear colleagues,

We are pleased to present the first issue of the scientific-methodological journal “Bulletin of Armenian Libraries” for 2025, continuing the established tradition of scientific dialogue and cooperation with the professional community.

The articles presented in the journal illuminate a wide range of contemporary library science and information management issues, combining local experience aimed at preserving national heritage with advanced international solutions. Special attention is given to digitization strategies, models for ensuring digital accessibility of cultural values, information security, as well as the application of artificial intelligence and modern tools in the context of both international and Armenian library experience.

The latest issue of the “Bulletin of Armenian Libraries” compiles the articles presented in the following sections: National Heritage Preservation, Digital Content Management, Management & Professional Development, Diaspora Heritage Preservation & Promotion. Each section presents theoretical generalizations and practical solution proposals that contribute to the modernization of libraries and the deepening of their scientific-cultural mission.

The journal “Bulletin of Armenian Libraries” continues to remain one of the important platforms for consolidating the professional community of library and related fields, stimulating the exchange of scientific-methodological experience, the development of library policy, and sectoral cooperation.

We believe that this journal issue, through its comprehensive content coverage, will contribute to promoting innovative trends in library work, expanding professional perspectives, and establishing modern approaches.

E-journal “Bulletin of Armenian Libraries” Editor-in-Chief,
Anna Chulyan, Ph.D., Associate Professor

СЛОВО ГЛАВНОГО РЕДАКТОРА

Уважаемые коллеги, дорогие читатели!

Представляем первый номер научно-методического журнала «Вестник библиотек Армении» за 2025 год, продолжая сложившуюся традицию научного диалога и сотрудничества с профессиональным сообществом.

Статьи, представленные в журнале, освещают широкий спектр актуальных проблем современного библиотековедения и информационного управления, органично сочетая местный опыт сохранения национального наследия с передовыми международными решениями. Особое внимание уделено стратегиям цифровизации, моделям обеспечения цифровой доступности культурных ценностей, информационной безопасности, а также внедрению искусственного интеллекта и современных технологий в контексте как международного, так и армянского библиотечного опыта.

Статьи, включенные в данный выпуск, представлены в следующих тематических разделах: «Сохранение национального наследия», «Управление цифровым контентом», «Управление и профессиональное развитие», «Популяризация наследия диаспоры». Каждый раздел содержит теоретические обобщения и предложения практических решений, способствующих модернизации библиотек и углублению их научно-культурной миссии.

Журнал «Вестник библиотек Армении» продолжает оставаться одной из важнейших платформ консолидации профессионального сообщества библиотечной и смежных сфер, стимулируя обмен научно-методическим опытом, развитие библиотечной политики и отраслевого сотрудничества.

Мы уверены, что данный выпуск журнала благодаря своему содержательному охвату будет способствовать развитию инновационных тенденций в библиотечном деле, расширению профессиональных горизонтов и внедрению современных подходов.

Главный редактор электронного журнала
«Вестник библиотек Армении»
к.ф.н., доцент Анна Грайровна Чулян

<https://doi.org/10.52027/18294685-ma.1.25-02>

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄՀԵՐ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՅՈՒԼԻԱ
Հայաստանի ազգային գրադարան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ
«ԿԱՃԱՌ» ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇՏԵՄԱՐԱՆԵՐԸ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ գրադարանային շտեմարաններ, թվայնացում, արխիվային կառավարում, տեղեկատվական անվտանգություն, պատերազմական ժառանգություն, գիտահետազոտական գործունեություն, մշակութային ժառանգության պահպանում, միջազգային փորձ, հետազոտական մեթոդաբանություն, տեղեկատվական պատերազմ:

Keywords: library repositories, digitization, archival management, information security, war heritage, scientific research activity, cultural heritage preservation, international experience, research methodology, information warfare.

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ադրբեջանա-թուրքական ագրեսիայի ընթացքում 2020 թվականի սեպտեմբերի 27-ի և 2023 թվականի սեպտեմբերի 19-ի հաջորդական ռազմարշավների հետևանքով Արցախի Հանրապետության ինքնիշխան տարածքի բռնազավթումը և արցախցիների բռնի տեղահանությունը հայկական պետականության համար ստեղծել են անվտանգային-պաշտպանական բարդագույն մարտահրավերներ: Ադրբեջանը Թուրքիայի համակողմանի աջակցությամբ ձգտում է ամրապնդել իր ագրեսիվ պատերազմի անընդունելի հետևանքները և Հայաստանի Հանրապետության դեմ շարունակում է մղել հիբրիդային պատերազմ, որի առանցքային ճակատներից մեկը տեղեկատվական-քարոզչական դաշտն է:

Այս պատերազմում հետևողականորեն խեղաթյուրվում են հակամարտության պատմական փաստերը, կեղծվում է պատմական նյութը, և վիթխարի միջոցներ են ծախսվում համաշխարհային գիտական համակարգի և հասարակական կարծիքի վրա ազդելու համար: Հատկապես վտանգված է Արցախի պաշտպանության բանակի վերա-

բերյալ գիտատեղեկատվական նյութերի պահպանումը, հանրահռչակումը և հետազոտությունը, ինչը հանդիսանում է ոչ միայն գիտական, այլև ռազմավարական առաջնահերթություն:

Արցախի բռնազավթված տարածքների վիթխարի մշակութային ժառանգության կորուստը ստիպում է վերանայել և վերստին արժեքավորել մեր մտավոր ժառանգության փրկությանն ուղղված քայլերը: Այս առումով հրատապ է ոչ միայն նյութական արժեքների պահպանումը, այլև Արցախի պատմության, պաշտպանական-անվտանգային հիմնահարցերի, հասարակական գործընթացների վերաբերյալ գիտական նյութերի հետազոտությունը, վերլուծությունը և դրանց մատչելիությունն ապահովելու նպատակով համակարգված աշխատանքների իրականացումը:

«Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանի և շտեմարանների առկայությունը կարևոր է Արցախի պաշտպանության բանակի գործունեության և պատմության ուսումնասիրության, ինչպես նաև այն տեղեկատվության պահպանման համար, որը թիրախավորվում է թշնամու քարոզչական հարձակումներով: Այս խնդիրների լուծումը պահանջում է գիտական համայնքի, պետական և հասարակական կառույցների համատեղ ջանքերը՝ գիտական հետազոտությունների, պատմական փաստերի ճշգրիտ ներկայացման և միջազգային հանրությանը դրանց մատուցման միջոցով:

ՀՀ-ի, Մփյուռքի, ինչպես նաև իրենց կառավարությունների շահադիտական քաղաքականությունը մերժող հասարակությունները զգում են Արցախի պատմության, հակամարտության, պաշտպանական-անվտանգային հիմնահարցերի վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների և գիտական եզրահանգումների կարիքը: Այս համատեքստում «Կաճառ» գիտական կենտրոնի գործունեությունը նպատակաուղղված է ոչ միայն Արցախի վերաբերյալ գիտաճանաչողական միջոցառումների կազմակերպմանը, այլև բուհերի ուսանողների համար դասախոսությունների, գրքերի շնորհանդեսների, միջազգային գիտաժողովների, ինչպես նաև գիտական հիմնարկների ու անհատ հետազոտողների հետ համագործակցության խորացմանը:

Ներկայիս մարտահրավերների պայմաններում ակնհայտորեն պահանջված է առկա գիտական, մշակութային և տեղեկատվական ռեսուրսների մոբիլիզացումը՝ Արցախի պատմության և պաշտպանության հետ կապված նյութերը պահպանելու, հանրահռչակելու և հետագա գիտահետազոտական աշխատանքների ամուրի հիմք ստեղծելու համար: Այս առումով Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի վերաբերյալ տեղեկությունների պահպանումն երիցս անհրաժեշտ է, ինչը դարձել է «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանի գործունեության առաջնահերթությունը:

Հետազոտության նպատակը, մեթոդաբանությունը և աղբյուրագիտական հիմքը: Ներկայացվող հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի վերաբերյալ գիտատեղեկատվական նյութերի պահպանման, հանրահռչակման և հետազոտության խնդիրները՝ հաշվի առնելով միջազգային փորձը և ժամանակակից գրադարանագիտության զարգացումները: Հետազոտությունն ուղղված է նաև մշակութային ժառանգության պաշտպանության արդյունավետ մեխանիզմների մշակմանը՝ տեղեկատվական անվտանգության տեսանկյունից:

Մեթոդաբանությունը: Հետազոտության շրջանակում կիրառվել են մի շարք ակադեմիական մեթոդներ, ներառյալ՝

- **Փաստագրական մեթոդ**՝ Արցախի պաշտպանության բանակի մասին առկա նյութերի հավաքագրման, վերլուծության և համադրման նպատակով,

- **Պատմահամեմատական մեթոդ**՝ տարբեր պատմական ժամանակաշրջաններում գրադարանային կառավարման և տեղեկատվական համակարգերի փորձի ուսումնասիրության համար,

- **Վերլուծական մեթոդ**՝ գրադարանային շտեմարանների կառավարման արդյունավետության գնահատման նպատակով,

- **Համակարգային մոտեցում**՝ տեղեկատվական անվտանգության և մշակութային ժառանգության պաշտպանության համակարգային մեխանիզմների բացահայտման համար:

Աղբյուրագիտական հիմքը: Հետազոտության հիմքում ընկած են բազմաբնույթ աղբյուրներ, այդ թվում՝ Արցախի պաշտպանության բանակի գործունեության մասին պատմական և արխիվային փաստաթղթեր, գրադարանային կառավարման միջազգային լավագույն փորձի վերաբերյալ գիտական որոշ ուսումնասիրություններ, Հայաստանի ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի, ինչպես նաև հայաստանյան և արտասահմանյան բուհական գրադարանների թվայնացման և արխիվացման փորձն ընդհանրացնող հրապարակումները, տեղեկատվական անվտանգության և տեղեկատվական պատերազմների վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները, ոլորտի փորձագետների, ռազմական պատմաբանների և գրադարանագետների հետ հարցազրույցները:

Այս մեթոդական և աղբյուրագիտական հիմքը հնարավորություն է տալիս համակողմանիորեն վերլուծել Արցախի պաշտպանության բանակի վերաբերյալ գիտատեղեկատվական շտեմարանների կառավարման հիմնախնդիրները և մշակել դրանց պահպանման ու զարգացման ռազմավարական ուղիները:

Գրադարանի ստեղծման աշխատանքները մեկնարկել են Կենտրոնի հիմնադրման օրից՝ 2006 թ. փետրվարի 20-ին, երբ նախաձեռնող խմբի անդամները գրքեր նվիրաբերեցին այդ նպատակով: Գրադարանի համալրման, ֆոնդերի ձևավորման, ռազմական գիտելիքների հավաքման, արխիվացման և պահպանման խնդիրներին պարբերաբար անդրադարձներ են եղել Կենտրոնի ղեկավարի հաշվետվություններում, գրադարանի աշխատակիցների հաղորդումներում և «Կաճառ» տեղեկագրի (2007-ից՝ տարեգրքի) հրապարակումներում [Մկրտչյան, 2006, № 1]: Տեղեկագրի յուրաքանչյուր համարում «*Գիտական կենտրոնի գրադարանը համալրվում է*» խորագրի տակ տպագրվել են գրադարանին ընծայված գրքերի ցանկերը և նվիրատուների անունները: Հայտարարվել է Շուշիում համահայկական նշանակության գրադարանի և Արցախի պաշտպանության արխիվի հիմնադրման բարձր գաղափարը, որով կոչ էր արվում յուրաքանչյուրին մասնակից լինել այս համազգային մշակութային նախաձեռնությանը [նույն տեղում, 8]: Կարճ ժամանակամիջոցում և առանց որևէ ֆինանսական աջակցության հավաքվել են շուրջ 1000 կտոր գիրք և գիտական ամսագրեր, տասնյակ անուն պարբերականների հավաքածուներ

[Հարությունյան, 2006, № 4, 1]: Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) Երևանի կենտրոնի տեղեկատվության մասնագետ, գրադարանավար Գ. Խաչատրյանը գրադարանի համար ուղարկել է գրքերի առաջին խմբաքանակը՝ հիմնականում ԶԼՄ-ի Կովկասյան ինստիտուտի հրատարակությունները [Ստացվեց գրքերի առաջին խմբաքանակը, 2006, № 5, 4]: Արդեն սեպտեմբեր ամսում գրքային ֆոնդը մոտեցել է 3000 միավորի սահմանագծին՝ «Կաճառ» գիտական կենտրոնի նվիրյալ աշխատակիցների ջանքերի և անհատ բարեգործների նվիրատվությունների շնորհիվ: Այսպես՝ «Մետաքս» ՓԲԸ տնօրեն Վ. Միմոնյանը, ըմբռնումով մոտենալով Շուշիում ֆունդամենտալ գրադարան ստեղծելու մեր ձգտումներին, նվիրաբերել է շուրջ 500 կտոր գիրք և գրադարակներ: Գրադարանային գործի երկարամյա սպասավոր, այնուհետև զինծառայող Ռ. Մնացականյանը հատկացրել է մոտ 50 կտոր նեղ մասնագիտական գրականություն [Ֆունդամենտալ գիտական գրադարանի ստեղծման ճանապարհին, 2006, №7, 1]:

Զուգահեռաբար ստեղծվել է նաև անձնական ծագման առաջին ֆոնդը: Մանկավարժ Զ. Միրզոյանը «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվին մշտական պահպանության է հանձնել հոր՝ Երվանդ Միրզոյանի կենսագործունեությանը վերաբերող փաստաթղթեր, նամակներ, հին թերթերի կտրածոներ, պատմական թեմատիկայով զանազան նյութեր, ստեղծագործությունների ձեռագրեր, իսկ գրադարանին՝ մի քանի տասնյակ կտոր գրականություն [Ք. Յու., 2006, № 7,1]:

Արդեն նույեմբերին գրադարանային ֆոնդը մոտեցել է հինգ հազար միավորի սահմանագծին: Բացի տեղեկագրի նշված խորագրի ներքո հրապարակված 187 կտոր գրականությունից, գրադարանը համալրվել է բազմաթիվ այլ նվիրատուների մասհանումների շնորհիվ: Այսպես՝ արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանը հատկացրել է 40 միավոր, հետազայում՝ ևս 60 միավոր գրականություն: Փոխանակման ֆոնդերից գրականության փոխանակումների առաջին փորձը ձեռնարկվել է Հովհ. Թումանյանի անվան հանրապետական մանկական գրադարանի հետ, ինչի շնորհիվ 50 կտոր գրքերի համալրում է եղել [Ք. Յու., 2006, № 9,1]:

Պատմության արխիվի կազմակերպումը, որպես Արցախի Հանրապետության գիտական ներուժի զարգացման համար գիտական հիմքերի ստեղծման կարևորագույն միջոց, կարևորվել է, ինչին կարող էին նպաստել և պետությունը, և հասարակական-քաղաքական կազմակերպությունները, և անհատները [Մկրտչյան, 2006, № 9, 1]:

Գրադարանի և պատմության արխիվի կայացման ուղղությամբ ձեռնարկված ջանքերի մասին հաղորդվել է կենտրոնի ղեկավարի ընթացիկ հաշվետվության մեջ: Մասնավորապես, արձանագրվել է, որ գրքային ֆոնդը հատել է տասը հազար միավորի շեմը [Հարությունյան, 2008, 12]:

Գրադարանի աշխատակցուհի Լուսյա Հովհաննիսյանի հաղորդման մեջ մանրամասն տեղեկություններ են ներկայացվել կատարված աշխատանքների ու հեռանկարների մասին [Հովհաննիսյան, 2008, 227-230]: Հատկանշական է, որ գրքերի և պարբերական հրատարակությունների ամենամեծ հավաքածուն ռազմագիտության ոլորտից էր՝ առանցքում ունենալով Պաշտպանության բանակի վերաբերյալ նյութերը:

Գրքերի շնորհանդեսների կազմակերպումը նպատակ ուներ ընդլայնել հետաքրքրությունը տպագիր ժառանգության նկատմամբ, ամրապնդել կապը ընթերցողների ու ստեղծագործողների միջև: Այդ համատեքստում կարևորվել է նաև նման միջոցառումներին Կենտրոնի գիտաշխատողների ակտիվ մասնակցությունը և այդօրինակ մշակութային նախաձեռնությունների հանրահռչակումը [Ղուլյան, 2014, 231]:

Ծավալի սահմանափակումը հնարավորություն չի տալիս ներկայացնել գրադարանի ու արխիվի կայացման բոլոր առանձնահատկությունները և ուշագրավ մանրամասները, որոնք ցանկության դեպքում կարելի է գտնել Կենտրոնի պաշտոնական հրատարակություններում, որոնք հասանալի են Հայաստանի ազգային գրադարանի «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ» էլեկտրոնային շտեմարանում [Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ]:

«Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանում առանձնահատուկ տեղ ու նշանակություն էր տրվում ռազմական գիտությանը և, մասնավորապես, պաշտպանության բանակին նվիրված գրականությանը և արխիվային նյութերին: Այդ մասին հանգամանալից տեղեկություններ կան ինչպես համանուն տարեգրքի համարներում, այնպես էլ առանձին ուսումնասիրողների գիտական հոդվածներում [Ավանեսով, 2016, 461-464; Ավանեսով, 2017, 21-26]:

Հատուկ ուշադրության կենտրոնում պահելով ռազմագիտական գիտելիքների հանրահռչակման և շրջանառման խնդիրները՝ ժողովվել են Պաշտպանության բանակի մասին հանրամատչելի գրականություն, պաշտոնական փաստաթղթեր և հրատարակություններ, գիտական ուսումնասիրություններ ու մենագրություններ, հուշագրություններ, վավերագրական վկայություններ, մի խոսքով՝ այլևայլ այնպիսի նյութեր, որոնք օգտակար կարող էին լինել ռազմական պատմության ուսումնասիրության համար:

Երևանում գիտական կենտրոնի գործունեության վերսկսման համար կարևորվում է ժամանակակից գրադարանագիտության զարգացումների տեղայնացումը: Ժամանակակից գրադարանագիտությունը շարունակում է զարգանալ տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտական հետազոտությունների դաշտում՝ ապահովելով տվյալների պահպանման, կառավարման և տարածման նոր հնարավորություններ: Ակնհայտ է, որ տեղեկատվական դարաշրջանում գրադարաններն այլևս պարզապես տպագիր աղբյուրների պահպանման կենտրոններ չեն. դրանք վերածվել են բազմաֆունկցիոնալ գիտական միջավայրերի, որոնք ապահովում են տեղեկատվական ծառայությունների ամբողջական ցիկլ:

Գրադարանագիտության նոր ուղղությունները պայմանավորված են թվայնացման գլոբալ գործընթացներով: Մեծածավալ թվային արխիվների և տվյալների շտեմարանների ստեղծումը հնարավորություն է տալիս ապահովելու նյութերի մատչելիությունը տարբեր հետազոտական խմբերի համար՝ անկախ աշխարհագրական դիրքից: Այս համատեքստում կարևոր տեղ է զբաղեցնում թվային գրադարանների (digital libraries) զարգացումը, որը թույլ է տալիս պահպանել և տրամադրել ոչ միայն տեքստային, այլև մուլտիմեդիա, աուդիո և տեսապատկերային նյութեր:

Մեկ այլ առանցքային ուղղություն է արհեստական բանականության և մեքենայական ուսուցման ներմուծումը գրադարանային գործի մեջ: Օրինակ՝ գրադարանային կառավարման բազմաթիվ համակարգեր (ինչպիսիք են Ex Libris Alma, Koha և WorldCat) արդեն իսկ կիրառում են ավտոմատացված կատալոգավորում, օգտատերերի վարքագծի վերլուծություն և առաջարկությունների ակցորիթմներ: Արհեստական բանականության վրա հիմնված որոնման համակարգերը թույլ են տալիս օգտագործողներին ավելի արագ և ճշգրիտ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ նույնիսկ բարդ հարցումների դեպքում: Զուտ ազգային ԱԲ ստեղծելու ուղղությամբ ՀՀ-ում տարվող աշխատանքները ոլորտի զարգացման հեռանկարներ են բացում:

Բացի այդ, բաց հասանելիության (open access) և բաց տվյալների (open data) նախաձեռնությունները էապես փոխում են գրադարանագիտության ավանդական դերը: Այս մոտեցումները նպաստում են գիտական տեղեկատվության ազատ շրջանառությանը, ինչը հատկապես կարևոր է ռազմական, պատմական և հասարակագիտական հետազոտությունների համար: Նման համակարգերի օրինակներ են՝ OpenAIRE, CORE, arXiv և HAL շտեմարանները, որոնք ապահովում են գիտական հրապարակումների ազատ հասանելիությունը:

Ժամանակակից գրադարանների կառավարման մեջ մեծ նշանակություն ունի նաև բլոկչեյն տեխնոլոգիայի կիրառումը, որը թույլ է տալիս ստեղծել ապացուցելի, անփոփոխ և անվտանգ գրառումների համակարգեր: Բլոկչեյնը կարող է օգտագործվել հեղինակային իրավունքի պաշտպանության, վավերական աղբյուրների նույնականացման և գրադարանային փոխանակման գործընթացների համար:

Կարելի է նշել, որ գրադարանագիտության նոր ուղղությունները պայմանավորված են տեխնոլոգիական նորարարություններով և տեղեկատվության կառավարման փոփոխություններով: Ռազմական պատմության պահպանման տեսանկյունից «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանը կարող է օգտվել այս ժամանակակից մոտեցումներից՝ ապահովելով տվյալների թվայնացում, կառավարման ավտոմատացում և միջազգային գիտական համագործակցության ընդլայնում:

Թվայնացման գործընթացները և արխիվային կառավարման մոդելները

Ժամանակակից գրադարանագիտության առանցքային ուղղություններից մեկը թվայնացումն է, որը հնարավորություն է տալիս ոչ միայն պահպանել ֆիզիկական փաստաթղթերը, այլև ապահովել դրանց լայն հասանելիությունը հետազոտողների, ուսանողների և հասարակության համար: Թվայնացման գործընթացը ներառում է մի շարք փուլեր, որոնք ապահովում են նյութերի վերարտադրումը, կարգաբերումն ու կառավարման ավտոմատացումը:

1. *Թվայնացման հիմնական սկզբունքները:* Թվայնացման ժամանակակից մոտեցումները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա.

- **Բարձրորակ սկանավորում և թվային պահպանություն.** փաստաթղթերը վերածվում են թվային ձևաչափի՝ ապահովելով դրանց հեշտ որոնելիություն և պահպանում:

• **Մետատվյալների ստեղծում.** Թվային արխիվների արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է նկարագրող տվյալների (metadata) ավելացում, որը թույլ է տալիս կատարել որոնում՝ ըստ հեղինակների, բովանդակության, ստեղծման ամսաթվի և այլ չափանիշների [Feather, Sturges, 2003, 417-419]:

• **Պահպանության և կրկնօրինակման ապահովում.** Թվայնացված նյութերը պահվում են սերվերների կամ ամպային հարթակներում՝ կորստի ռիսկերը նվազեցնելու համար:

2. *Արխիվային կառավարման մոդելներ:* Արխիվային կառավարման ժամանակակից մոդելները հնարավորություն են տալիս համակարգված ձևով պահպանել, կազմակերպել և տարածել ռազմական, պատմական և գիտական աղբյուրները: Դրանցից ամենակարևորներն են՝

Օնթոլոգիական մոդելները – կիրառվում են բարդ գիտական արխիվների կառավարման համար՝ ապահովելով տվյալների ինտեգրվածություն և հասանելիություն: Օրինակ՝ CIDOC CRM-ը մշակվել է պատմամշակութային արխիվների համար:

Օբյեկտակենտրոն մոդելները – ներառում են թվայնացված փաստաթղթերը՝ որպես առանձին թվային օբյեկտներ՝ ապահովելով դրանց կարգաբերումը, որոնումը և օգտագործումը: Սա լայնորեն կիրառվում է ռազմական արխիվներում:

Թվային պահպանման համակարգեր (Digital Preservation Systems) – LOCKSS (Lots of Copies Keep Stuff Safe) և CLOCKSS (Controlled Lots of Copies Keep Stuff Safe) համակարգերը նախատեսված են գիտական և պետական փաստաթղթերի երկարաժամկետ պահպանման համար:

Բաց տվյալների կառավարման մոդելները (Open Data Management) – նպաստում են այնպիսի արխիվների ստեղծմանը, որոնք հասանելի են գիտական հանրությանը և հետազոտողներին: Սա կարևոր է ռազմական պատմության ուսումնասիրության համար, քանի որ թույլ է տալիս տարբեր աղբյուրների համադրման միջոցով վերլուծություններ կատարել:

3. *Թվայնացման մարտահրավերներն ու Արցախի համատեքստը:* Արցախի ռազմական պատմության ուսումնասիրության տեսանկյունից թվայնացումը կարևոր գործիք է տեղեկատվության պահպանման և հետազոտական օգտագործման համար: Սակայն այս գործընթացը բախվում է մի շարք մարտահրավերների.

• **Տեխնիկական սահմանափակումներ** – թվայնացման համար անհրաժեշտ են բարձրորակ սարքավորումներ, սերվերային հզորություն և տվյալների պահպանման ռազմավարություն:

• **Մատչելիության խնդիրներ** – ոչ բոլոր փաստաթղթերը կարող են հանրային հասանելիություն ունենալ ռազմական գաղտնիության կամ հեղինակային իրավունքի սահմանափակումների պատճառով:

• **Կադրային պատրաստվածություն** – անհրաժեշտ են գրադարանագետներ և արխիվագետներ, ովքեր տիրապետում են թվայնացման առաջատար տեխնոլոգիաներին:

4. *Զարգացման հեռանկարներ և առաջարկություններ.*

- «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանի համար թվայնացման ռազմավարության մշակում, որը պետք է ներառի սկանավորման, արխիվացման և թվային կառավարման չափորոշիչներ:

- Միջազգային համագործակցություն՝ աշխարհի առաջատար գիտական արխիվների և ռազմական ուսումնասիրությունների կենտրոնների հետ փորձի փոխանակում իրականացնելու նպատակով:

- Արհեստական բանականության գործիքների կիրառում՝ OCR (Optical Character Recognition) տեխնոլոգիաների միջոցով հին փաստաթղթերի թվային մշակման և որոնելիության բարձրացման համար:

- Ամպային պահոցների (Cloud Storage) և բլոկչեյն տեխնոլոգիաների օգտագործում՝ թվային փաստաթղթերի անվտանգության և վավերականության ապահովման համար:

Կարելի է նշել, որ թվայնացման և արխիվային կառավարման նոր մոտեցումները կարող են էապես բարելավել Արցախի ռազմական պատմության վերաբերյալ տեղեկատվության պահպանման և հետազոտական գործընթացների արդյունավետությունը: Ֆինանսավորման պարագայում «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանը կարող է որդեգրել առաջատար մոդելներ՝ ապահովելով տվյալների հասանելիություն և պաշտպանվածություն:

Գրադարանային կառավարման միջազգային փորձը. Հայաստանի ազգային և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանների թվայնացման փորձը

Ժամանակակից գրադարանային կառավարման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է թվայնացման գործընթացներով, արխիվային քաղաքականությամբ և տվյալների կառավարման ժամանակակից համակարգերով: Աշխարհի առաջատար ազգային գրադարանները (օր.՝ British Library, Library of Congress, Bibliothèque nationale de France) որդեգրել են հստակ ռազմավարություն՝ մշակութային ժառանգության թվայնացման և բաց հասանելիության ապահովման ուղղությամբ: Մշակվում են նաև տեխնոլոգիական փոփոխության և նորարարության վերաբերյալ տեսական հիմքեր՝ քննադատներ կայացնելով, թե ինչպես կարող են այդ տեսությունները կիրառվել գրադարաններում ուսուցման ծրագրերի կառավարման շրջանակում: Տեսությունները նաև օգտագործվում են՝ հասկանալու համար, թե ինչպես է տեխնոլոգիան ինտեգրվում ուսուցման և ուսանելու գործընթացներում [Woodard, Hinchliffe, 2002, 39]:

Հայաստանում գրադարանային կառավարման զարգացումը նույնպես վերջին տարիներին մեծ ուշադրություն է գրավում, մասնավորապես՝ Հայաստանի ազգային գրադարանում (ՀԱԳ), ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) և այլ բուհերի գիտական գրադարաններում:

1. Հայաստանի ազգային գրադարանի թվայնացման ծրագրերը: Հայաստանի ազգային գրադարանը (ՀԱԳ) երկրում տեղեկատվական և մշակութային ժառանգության

պահպանման առանցքային հաստատություններից մեկն է: Վերջին տասնամյակում գրադարանը մեծ ջանքեր է գործադրել թվայնացման ուղղությամբ՝ իրականացնելով հետևյալ նախաձեռնությունները.

- **Թվայնացված գրքերի և արխիվային փաստաթղթերի ստեղծում.** ՀԱԳ-ը թվայնացրել է տասնյակ հազարավոր փաստաթղթեր, այդ թվում՝ հին հայկական տպագիր գրքեր, հուշագրություններ, քարտեզներ, ձեռագրեր և թերթեր:

- **Հայկական հին մամուլի թվայնացում.** «Հայկական պարբերականների թվայնացման ծրագիր»-ը ներառում է XVIII-XX դարերի հայկական թերթերի ու ամսագրերի թվայնացումը, ինչը թույլ է տալիս հետազոտողներին ուսումնասիրել պատմական, քաղաքական և այլ նյութեր:

- **OCLC WorldCat համակարգի ինտեգրում.** Հայաստանի ազգային գրադարանը OCLC-ի միջազգային գրադարանային ցանցին միանալու վերջին փուլում է, ինչը հնարավորություն կընձեռի հայկական գրականությունը հասանելի դարձնել միջազգային գիտական հանրությանը:

- **OPAC (Online Public Access Catalog) համակարգի ներդրում.** ՀԱԳ-ն անցել է էլեկտրոնային գրացուցակի մոդելին՝ ապահովելով առցանց որոնման և տեղեկատվության կառավարման արդյունավետություն:

2. *ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի փորձը:* Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) հիմնարար գիտական գրադարանը երկրի առաջատար գիտական գրադարանն է, որն իր թվայնացման ծրագրերով նպաստում է գիտական տեղեկատվության պահպանմանը և տարածմանը:

- **ՀՀ ԳԱԱ էլեկտրոնային շտեմարանները.** Հիմնարար գիտական գրադարանն ունի սեփական էլեկտրոնային շտեմարանները, որտեղ հավաքագրվում են ԳԱԱ ինստիտուտների կողմից ստեղծված գիտական աշխատությունները:

- **Հին և հազվագյուտ գրականության թվայնացում.** ԳԱԱ-ն մեծ ուշադրություն է դարձնում հազվագյուտ գիտական նյութերի և մենագրությունների թվայնացմանը, հատկապես՝ բնական և հասարակական գիտությունների ոլորտում:

- **Համագործակցություն միջազգային կառույցների հետ.** ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը համագործակցում է եվրոպական և ռուսական ակադեմիական գրադարանների հետ՝ գիտական տվյալների փոխանակման շրջանակներում:

3. *Հայաստանի բուհերի գիտական գրադարանների թվայնացման մարտահրավերները և փորձը:* Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) գրադարանները նույնպես ակտիվորեն մասնակցում են թվայնացման գործընթացին:

- **ԵՊՀ գիտական գրադարանը** ստեղծել է սեփական թվային գրադարան, որտեղ պահվում են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական աշխատությունները:

- **Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) գրադարանն** ինտեգրված է միջազգային գրադարանային ցանցերին (օր.՝ EBSCO, ProQuest) և ապահովում է օտարերկրյա էլեկտրոնային աղբյուրների հասանելիություն:

- **Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) գրադարանն** իրականացնում է տեխնիկական և ճարտարագիտական գրականության թվայնացում՝ ապահովելով առցանց մատչելիություն:

4. «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանի թվայնացման հեռանկարները: Վերոհիշյալ փորձը կարող է կարևոր հիմք հանդիսանալ «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանի կառավարման և զարգացման համար:

- Մոդելավորել կառավարման համակարգը՝ հիմնվելով ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի փորձի վրա՝ ապահովելով գիտական արխիվների համալրում, կարգավորում և թվային մատչելիություն:

- Օգտագործել Հայաստանի ազգային գրադարանի թվայնացման մոտեցումները՝ ստեղծելով էլեկտրոնային շտեմարաններ, որոնք հասանելի կլինեն ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային հետազոտողներին:

- Արհեստական բանականության կիրառումը գրադարանային կառավարման մեջ՝ օրինակ՝ OCR (Optical Character Recognition) տեխնոլոգիաների միջոցով հին և հազվագյուտ փաստաթղթերի թվայնացում և նշաճանաչում:

Ռազմական գրադարանների և արխիվների լավագույն միջազգային մոդելները

Ռազմական գրադարաններն ու արխիվները կարևոր դեր են խաղում ռազմական պատմության, ռազմավարական հետազոտությունների և պաշտպանական քաղաքականության ձևավորման գործում [Welch, Meyer, MacDermid, Weiss, 2006, 5]: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ ռազմական գրադարաններն ու արխիվները գործում են մի քանի հիմնական սկզբունքներով՝ թվայնացում, տեղեկատվական անվտանգություն, բաց տվյալների համակարգեր և մասնագիտական համագործակցություն:

1. ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի գրադարանային համակարգը (DOD Libraries)

ԱՄՆ պաշտպանության նախարարությունը (Department of Defense, DOD) ղեկավարում է բազմաթիվ ռազմական գրադարաններ և արխիվներ, որոնք միավորված են միասնական կառավարման համակարգում: Դրանցից ամենակարևորներն են .

US Army War College Library (ԱՄՆ ԶՈՒ ռազմաքաղաքական հետազոտությունների գրադարան) – այս գրադարանը մասնագիտացված է ռազմական տեսությունների, ռազմավարական ուսումնասիրությունների և անվտանգության քաղաքականության վրա: Այն ունի լայնածավալ թվային արխիվներ, որոնք ներառում են բաց հասանելիության հետազոտական զեկույցներ, ռազմավարական վերլուծություններ և պատմական փաստաթղթեր:

Defense Technical Information Center (DTIC) – սա ԱՄՆ ռազմական հետազոտությունների գլխավոր թվային շտեմարանն է, որը ներառում է միլիոնավոր փաստաթղթեր ռազմական տեխնոլոգիաների, անվտանգության քաղաքականության և ռազմավարական հետազոտությունների վերաբերյալ: DTIC-ի մոդելը կարող է կիրառվել Արցախի «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանի թվայնացման ռազմավարության համար՝ ստեղծելով կենտրոնացված էլեկտրոնային շտեմարան ռազմական հետազոտությունների համար:

Naval War College Library (Ռազմածովային քոլեջի գրադարան) – մասնագիտացված է ռազմածովային ռազմավարության, ռազմական պատմության և միջազգային անվտանգության ուսումնասիրությունների ոլորտներում: Այն ունի ռազմածովային գործողությունների թվային քարտեզների մեծ շտեմարան, ինչը կարող է օրինակ ծառայել Հայաստանի պաշտպանական մարտավարությունների հետազոտության համար:

2. Մեծ Բրիտանիայի ռազմական արխիվները և գրադարանները

Մեծ Բրիտանիայում ռազմական հետազոտությունները համակարգվում են մի քանի խոշոր ինստիտուտների կողմից.

Imperial War Museum Archives (Կայսերական ռազմական թանգարանի արխիվներ) – Մեծ Բրիտանիայի ամենամեծ ռազմական արխիվներից մեկը, որը ներառում է ինչպես փաստաթղթեր, այնպես էլ՝ լուսանկարներ, ձայնագրություններ և անձնական հուշեր: Արցախյան պատերազմների վավերագրումը կարող է օգտվել այս մոդելից՝ օգտագործելով արխիվային բազմաշերտ մոտեցում:

Royal United Services Institute (RUSI) Library – Մեծ Բրիտանիայի ռազմական հետազոտությունների թագավորական ինստիտուտի գրադարանը, որը ներառում է անվտանգության քաղաքականության և ռազմական դոկտրինների ուսումնասիրություններ:

British Library's Military Collection – Բրիտանական գրադարանն ունի հատուկ ռազմական ֆոնդեր, որոնք ընդգրկում են պատերազմների պատմությունը, ռազմավարական հետազոտությունները և ռազմական իրավունքները:

3. Ֆրանսիայի Պաշտպանության նախարարության պատմական ծառայությունը (SHD – Service Historique de la Défense)

Ֆրանսիան ունի եզակի ռազմական արխիվային մոդել, որը միավորում է ինչպես պատմական, այնպես էլ գործող զինված ուժերի հետազոտական կարիքները:

SHD (Service Historique de la Défense) – Ֆրանսիայի ՊՆ պատմական ծառայությունը կառավարվում է պաշտպանության նախարարության կողմից և ներառում է ռազմական արխիվներ, քարտեզներ, հրամանագրեր և գաղտնագերծված փաստաթղթեր: SHD-ն առանձնանում է իր **մոդուլային արխիվային կառավարման համակարգով**, ինչը թույլ է տալիս հասանելիություն ունենալ ռազմական փաստաթղթերին՝ ըստ ժամանակաշրջանի, ռազմական մասնագիտացման և գաղտնիության մակարդակի:

École Militaire Library (Էկոլ Միլիտերի գրադարան) – Ֆրանսիայի ռազմական ակադեմիայի հիմնական գրադարանը, որն ընդգրկում է ռազմավարական հետազոտություններ, ռազմական պատմություն և միջազգային անվտանգության ուսումնասիրություններ:

4. Ռուսաստան. ռազմական պատմության արխիվները և գրադարանները

Ռուսաստանում ռազմական պատմական հետազոտությունների համար գործում են մի քանի խոշոր արխիվներ.

Ռուսաստանի Պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվը (ЦАМО РФ) – պահպանում է ռուսական և սովետական ռազմական փաստաթղթերը, որոնք վերաբերում են XIX-XX դարերի ռազմական պատմությանը: Այս մոդելը կարող է օրինակ ծառայել Արցախի պաշտպանության բանակի արխիվային կառավարման համար՝ ապահովելով մանրակրկիտ փաստաթղթավորում և ռազմակրթական հետազոտություններ:

ՌԴ Զինված ուժերի Կենտրոնական գիտական գրադարանը (Центральная научная библиотека ВС РФ) – ռուսական զինված ուժերի գիտական գրադարանը, որը ներառում է ռազմավարական վերլուծություններ, մարտավարական ուսումնասիրություններ և տեխնիկական հետազոտություններ:

5. Ռազմական արխիվների կառավարման միջազգային ստանդարտները

Ռազմական արխիվների արդյունավետ կառավարման համար միջազգային մակարդակով կիրառվում են մի շարք ստանդարտներ.

- **ISAD(G) (International Standard for Archival Description)** – օգտագործվում է փաստաթղթերի արխիվացման միջազգային ստանդարտիզացման համար [International Council on Archives, 2000]:

- **EAD (Encoded Archival Description)** – արխիվային նյութերի թվային կառավարման միջազգային համակարգ [Library of Congress, 2002]:

- **Dublin Core Metadata Initiative (DCMI)** – թվային արխիվների և գրադարանային հավաքածուների կառավարման ստանդարտ [Dublin Core Metadata Initiative, 2025]:

«Կաճառ» գիտական կենտրոնի ռազմական գրադարանի և արխիվի զարգացման հեռանկարները

Հաշվի առնելով վերոնշյալ միջազգային մոդելները՝ «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանը կարող է.

- **Ինտեգրել թվային արխիվների կառավարման առաջատար մոդելները՝** կիրառելով OCLC WorldCat, DTIC կամ ISAD(G) ստանդարտները:

- **Ստեղծել մասնագիտացված ռազմական հետազոտությունների շտեմարան՝** հետևելով ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ռազմական գրադարանների փորձին:

• **Օգտագործել արհեստական բանականության և OCR տեխնոլոգիաներ՝** հին փաստաթղթերի թվայնացման համար:

• **Կազմակերպել միջազգային համագործակցություն՝** Բրիտանիայի՝ RUSI, ԱՄՆ՝ DTIC և Ֆրանսիայի՝ SHD արխիվային կառույցների հետ:

Այսպիսով՝ «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանի ռազմագիտական ֆոնդը կարող է որդեգրել միջազգային լավագույն փորձը՝ դառնալով կարևոր հետազոտական հարթակ Արցախի ռազմական պատմության ուսումնասիրման համար:

«Կաճառ» գիտական կենտրոնի ռազմագիտական շտեմարանների դերը: Այն կարևոր դեր կարող է ստանձնել Արցախի ռազմական պատմության հետազոտման մեջ: Հատկանշելի է թեմատիկ շտեմարանների կարևորությունը ռազմական պատմության ուսումնասիրման համար, արխիվային փաստաթղթերի վերլուծությունը և գիտական շրջանառությունը, Արցախի պաշտպանության բանակի ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումները:

Խնդիրները և զարգացման հեռանկարները

Գրադարանային կառավարման համակարգերի ներդրման հնարավորությունները սահմանափակ են: Այն հաղթահարելու իրատեսական ճանապարհը համապատասխան միջազգային դրամաշնորհի ներգրավումն է: Նույն եղանակով կարելի է լուծել թվայնացման և բաց հասանելիության խնդիրները: Այս հարցում կարող են աջակցել նաև Հայաստանի ազգային գրադարանի և ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի մասնագետները: Դիտարկելի են նաև միջազգային համագործակցության հեռանկարները, մանավանդ՝ «Կաճառ» գիտական կենտրոնի զարգացման հնարավոր ուղիների հստակեցման և նորարարական տեխնոլոգիաների ներդրման համատեքստում:

Եզրակացություն

Ուսումնասիրության արդյունքները հաստատում են, որ Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի վերաբերյալ գիտատեղեկատվական նյութերի պահպանումը, թվայնացումը և հանրահռչակումը ոչ միայն գրադարանագիտության արդի հիմնախնդիրներից են, այլև կարևորում են այդ գործընթացները որպես ռազմավարական նշանակություն ունեցող ազգային ու միջազգային օրակարգի բաղադրիչներ: Ցուցադրվեց, որ թվայնացման և գրադարանային կառավարման առաջատար միջազգային փորձը, ներառյալ ռազմական արխիվների պահպանման և մատչելիության մոդելները, կարող են կիրառվել նաև հայկական գիտական հաստատություններում՝ մասնավորապես «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանում:

Հետազոտության ընթացքում առանձնացվեցին հետագա ուսումնասիրությունների մի շարք կարևոր ուղղություններ՝ ներառյալ Պաշտպանության բանակի վերաբերյալ փաստաթղթերի համալիր թվայնացման ռազմավարության մշակումը, հայկական ռազմական արխիվների ինտեգրումը միջազգային շտեմարաններին, ինչպես նաև Արցախի

թեմատիկայի վրա տեղեկատվական պատերազմի ազդեցության բազմաշերտ վերլուծությունը: Այս ուղղությունները կարիք ունեն ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական մոտեցումների փոխլրացման՝ ապահովելու համար ռազմավարական հիշողության պաշտպանությունն ու շարունակականությունը:

Նախաձեռնության իրագործելիությունն առավելագույնս կախված է ոլորտային դերակատարների՝ պետական, ակադեմիական և հասարակական ինստիտուցիաների համակարգված և գործընկերային ներգրավվածությունից: Այս համատեքստում գիտական և գրադարանային համայնքի համար կարևորվում են հետևյալ առաջարկությունները.

ա) Արցախին վերաբերող գիտական նյութերի թվայնացումը, արխիվային պաշտպանությունը և հանրահռչակումը հոչակել որպես պետական ու հանրային առաջնահերթություն, ընդգրկելով դրանք ազգային տեղեկատվական անվտանգության և մշակութային ժառանգության պահպանման ռազմավարություններում:

բ) ամրապնդել միջազգային գիտական համագործակցությունը, մասնավորապես՝ ռազմական պատմության, գրադարանագիտության և թվային մարդագիտության ոլորտներում գործող հեղինակավոր կենտրոնների, թանգարանների և գիտահետազոտական հիմնարկների հետ:

գ) համակարգված կերպով ընդլայնել «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանային և արխիվային շտեմարանները, նպաստելով դրանց մասնագիտացված վերակազմակերպմանը, թվայնացմանը և բաց գիտական հասանելիության սկզբունքով օգտագործմանը:

Վերոնշյալ ուղղությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան ֆինանսական միջոցների ներգրավում՝ ներառյալ ազգային բյուջետային ծրագրերը, մասնավոր հատվածի ներդրումները, ինչպես նաև միջազգային գիտական ու մշակութային ֆոնդերի դրամաշնորհային աջակցությունը:

Այսպիսով, Արցախի պաշտպանության բանակի վերաբերյալ գիտական տեղեկատվական ժառանգության պահպանումը և արժևորումը պետք է դիտարկվի որպես պատմական պատասխանատվության, գիտական հիշողության և տեղեկատվական ինքնիշխանության միաժամանակյա դրսևորում:

SUMMARY

This study examines the preservation, dissemination, and research challenges associated with scientific and informational materials about the Defense Army of the Republic of Artsakh. Given the consequences of Azerbaijani-Turkish aggression and the hybrid warfare against Armenian statehood, safeguarding Artsakh-related archival materials is a strategic priority. The research explores international best practices in library management, digitization strategies, and information security. The study underscores the importance of mobilizing scientific and cultural resources, integrating library and archival institutions, and strengthening collaborations with global academic communities to ensure the accessibility and protection of Artsakh's intellectual heritage.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավանեսով Հ., «Կաճառ» գիտական կենտրոնը և Արցախյան ազգային ազատագրական պայքարի տարեգրությունը // «Կովկասը՝ մեր ընդհանուր տուն» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, Դիզակ պլուս, 2017, էջ 2:
2. Ավանեսով Հ., Արցախյան ազատամարտի տարեգրության ստեղծման ճանապարհին. «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2014, 272 էջ // «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Լրատու (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, «Լիմուշ», 2016, էջ 461-464:
3. «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ» էլեկտրոնային շտեմարան, [էլեկտրոնային աղբյուր] URL: <https://tert.nla.am/mamul/Kacar2006/Table.html>:
4. Հարությունյան Մ., «Կաճառ» գիտական կենտրոնի գործունեությունը (2006 թ. փետրվարի 20 – 2007 թ. դեկտեմբերի 20) // Կաճառ: Գիրք 1, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2008, էջ 5-29 (12):
5. Հարությունյան Վ., Գիտական կենտրոնը գործում է // Կաճառ, հունիս, 2006 թ., № 4, էջ 1:
6. Հովհաննիսյան Լ., Հիմնական գիտական գրադարանի ստեղծման ճանապարհին // Կաճառ: Գիրք 1, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2008, էջ, 227-230:
7. Ղուլյան Հ., «Կաճառ» գիտական կենտրոնի գործունեությունից (2008 թվական) // Կաճառ: Գիրք 2, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2014, էջ (226-236) 231:
8. Մկրտչյան Կ., Գիտական ներուժի զարգացման համար // Կաճառ, նոյեմբեր, 2006 թ., № 9, էջ 1:
9. Մկրտչյան Կ., Գիտության զարգացումը՝ ի նպաստ պետության ամրապնդման // Կաճառ, մարտ, 2006 թ., № 1, էջ 1-2:
10. Ստացվեց գրքերի առաջին խմբաքանակը // Կաճառ, հուլիս, 2006 թ., № 5, էջ 4:
11. Ք.[ոչարյան] Յու., Հիմնարար գիտական գրադարան. խնդիրներ ու զարգացման հեռանկարներ // Կաճառ, նոյեմբեր, 2006 թ., № 9, էջ 1:
12. Ք.[ոչարյան] Յու., Ստեղծվում է առաջին անհատական ֆոնդը // Կաճառ, սեպտեմբեր, 2006 թ., № 7, էջ 1:
13. Ֆունդամենտալ գիտական գրադարանի ստեղծման ճանապարհին // Կաճառ, սեպտեմբեր, 2006 թ., №7, էջ 1:
14. Dublin Core Metadata Initiative. *Dublin Core Metadata Element Set, Version 1.1*. Accessed June 4, 2025. [Electronic Resource] URL: <https://www.dublincore.org/specifications/dublin-core/dces/>, 31.03.2025.
15. Feather, J., & Sturges, P. (Eds.). *International encyclopedia of information and library science* (2nd ed.). Routledge. 2003. P. 417-419.
16. International Council on Archives. *ISAD(G): General International Standard Archival Description*. 2nd ed. Paris: International Council on Archives, 2000. [Electronic Resource] URL: <https://www.ica.org/en/isadg-general-international-standard-archival-description-second-edition>. (4.04.2025):

17. Library of Congress. *EAD: Encoded Archival Description Tag Library (Version 2002)*. Washington, DC: Library of Congress, 2002. [Electronic Resource] URL: [https://www.loc.gov/ead/\(31.03.2025\)](https://www.loc.gov/ead/(31.03.2025)):
18. Welch, E., Meyer R., MacDermid Sh., and Weiss H., *Military Libraries: Their Roles and Importance*. West Lafayette, IN: Military Family Research Institute at Purdue University, May 2006. [Electronic Resource] URL: <https://www.mfri.purdue.edu/wp-content/uploads/2018/03/Military-Libraries-Their-Roles.pdf>. (4.04.2025):
19. Woodard B., Hinchliffe L., Technology and Innovation in Library Instruction Management, *Journal of Library Administration*, Volume 36, 2002, Issue 1-2, Pages 39-55 | Published online: 12 Oct 2008. URL:https://doi.org/10.1300/J111v36n01_04 (4.04.2025):

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ

Հայաստանի ազգային գրադարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆ

Բանալի բառեր՝ Հայրենական պատերազմ, Հայաստանի ազգային գրադարան, գրադարանային հավաքածու, գաղափարախոսական աշխատանք, լրագիր, գիրք, պլակատ, ազգային դիվիզիաներ, հանձնարարական մատենագիտություն, ցուցահանդես:

Keywords: Patriotic War, National Library of Armenia, library collection, ideological work, newspaper, book, poster, national divisions, recommended bibliography, exhibition.

Երկրորդ համաշխարհային պատերազմը մարդկության պատմության ամենաավերիչ աղետներից մեկն է, որը տասնյակ միլիոնավոր մարդկային կյանքեր խլեց, հսկայական ավերածություններ պատճառեց, մարդկային կենսագրություններ ու ճակատագրեր խեղեց: Խորհրդային Հայաստանի տարածքը, բարեբախտաբար, չդարձավ ռազմական գործողությունների թատերաբեմ: Պատերազմի մահացու ալիքը, բախվելով Կովկասյան լեռներին, կոտրվեց և նահանջեց:

Ֆաշիստական առաջնորդների ծավալապաշտական նկրտումները ջախջախվեցին Կովկասյան լեռներում, Վոլգայի ափերին, Մոսկվայի մատույցներում, Ստալինգրադի ճակատամարտում: Արդյունքում անխուսափելի թվացող ավերածությունները և կոտորածը շրջանցեցին մեր երկիրը: Բայց և այնպես, դա նաև մեր պատերազմն էր, քանի որ այն վերաբերում էր հայ ժողովրդի կենսական շահերին: Այս պատերազմին մասնակցեց ինչպես Հայկական ԽՍՀ բնակչությունը, այնպես էլ Խորհրդային մյուս հանրապետություններում բնակվող հայերը և 1915 թվականի Հայոց ցեղասպանության հետևանքով արտասահմանում ձևավորված համաշխարհային հայկական սփյուռքը:

«Հայ ժողովուրդը Սովետական Միության մյուս ազատ և իրավահավասար ժողովուրդների նման խորությամբ ընկալեց մեր երկրի գլխին կախված մահացու վտանգը: Նա իր բազմադարյան պատմության ընթացքում մեկ անգամ չէ, որ ենթարկվել է օտարերկրյա բռնակալների ոտնձգություններին և գիտի, թե ինչ է բռնությունը, կոտորածները, սովը» [Армянский народ – боевой участник освободительной войны Советского Союза, 1941, 25 авг., № 235, 1]:

Պատերազմին մասնակցել է 600 հազար հայ (300 հազարը՝ Հայկական ՍՍՀ-ից, 200 հազարը՝ ԽՍՀՄ մյուս հանրապետություններից և մոտ 100-ը՝ դաշնակիցների բանակների շարքերում ու ֆաշիստական Գերմանիայի կողմից օկուպացված երկրների պարտիզանական ջոկատներում) [Арутюнян А., 2004, 19]:

Հայրենական մեծ պատերազմում փառապանծ հաղթանակի գործում մեծ է ոչ միայն Կարմիր բանակի ներդրումը: Ռազմական գործողությունների հաջողության մեջ ոչ

պակաս կարևոր դեր խաղաց ռազմաճակատին պարեն, ռազմամթերք, դեղորայք, հագուստ մատակարարող թիկունքը, որի հուսալիության ու բարոյաքաղաքական բարձր պատրաստվածության ու կոփվածության ուղղությամբ աշխատանքներ էին տանում նաև գրադարաններն ու գրադարանավարները: Եվ սխալված չենք լինի՝ վերջիններիս անվանելով գրադարանային ճակատի մարտիկներ:

Հայրենական պատերազմի առաջին օրերին գրադարանը վերանայեց բոլոր բաժինների աշխատանքները, արմատական փոփոխություններ կատարվեցին գրադարանի տարեկան պլաններում: Ռեսուրսների խնայողության նպատակով ՀԽՍՀ Կենտկոմի բյուրոն որոշում կայացրեց միավորել գրապալատն ու գրադարանը և կարճ ժամկետում հավաքածուները տեղափոխել ու տեղավորել գրադարանի նոր շենքում, որը բացվել էր ընդամենը մի քանի ամիս առաջ [Գրադարանային գործի պատմությունը Խորհրդային Հայաստանում, 1984, 21]:

Գրադարանի տնօրենության 1941 թ. օգոստոսի 12-ի նիստում դրվեց մասսայական աշխատանքների բաժնի գործընթացները հիմնավորապես վերակազմակերպելու խնդիրը: Հանձնարարվեց ցուցադրությունները պատրաստել այն տրամաբանությամբ, որ դրանք առավել արդյունավետ լինեն ու նպաստեն բնակչության ռազմահայրենասիրական տրամադրությունների ամրապնդմանը: Հանրային միջոցառումները պետք էր հարմարեցնել ռազմական իրադրության պայմաններին, կազմել թեմատիկ ցուցակներ, ցուցահանդեսները մոտեցնել բնակչության լայն խավերին [Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1337, գ. 11, ց. 1, թ. 1]:

Հաստատված տարեկան ծրագրից դուրս բիրլիոգրաֆիական (մատենագիտության) բաժնի աշխատակիցները կազմեցին թեմատիկ գրացուցակներ ու քարտարաններ՝ «Ռուս ժողովրդի պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ», «Գերմանաֆաշիստական ագրեսիան և սովետական ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմը», «Զորավար Սուվորով», «Ինչ է ֆաշիզմը», «Օկուպանտները Կովկասում» և այլն: Բազմաթիվ գրավոր տեղեկանքներ էին տրամադրվում ընթերցողներին, կազմակերպություններին, գիտահետազոտողներին: Պատերազմի պայմաններում ժողովրդին իրազեկելու, նրա բարոյահոգեբանական և ճանաչողական մակարդակը բարձրացնելու նպատակով հրատարակվում էին հանձնարարական մատենագիտական երկլեզվյան ցանկեր, որոնք սպասարկվում էին ընթերցասարահում և ցուցադրվում շրջիկ ցուցահանդեսներում¹:

Պատերազմը իր պայմաններն էր թելադրում գրադարանավարներին. Անձնակազմից պահանջվում էր առավել ճկունություն, օպերատիվություն, հանրության հետ աշխատանքների նոր, մինչ այդ անծանոթ հմտությունների ու կարողությունների կիրառում ամենօրյա գործընթացներում: Ցուցադրությունները բավական արդյունավետ էին և անցկացվում էին ոչ միայն գրադարանի շենքում, այլև խոշոր արտադրական հաստատություններում, կինոթատրոնների ճեմասրահներում, դպրոցներում, հոսպիտալներում:

¹ Տե՛ս Հակաօդային պաշտպանություն, 1942, 48 էջ; Սովետական ժողովրդի Հայրենական Մեծ պատերազմը, 1942, 48 էջ; Ժողովրդի ռազմական ուսուցումը, 1943, 36 էջ:

Որպես ցուցանմուշներ ներկայացվում էին լրագրերի կտրածոներ, լուսանկարներ, փաստաթղթեր, սխեմաներ և հանձնարարական գրականության ցանկեր: Առավել հետաքրքիր գրքերի նկարագրություններին կցվում էին ծանոթագրություններ: 1943 թ. գրադարանը կազմակերպել է «Ռազմական ուսուցումը դպրոցում», «Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմում», «Հայրենական պատերազմի ճակատներում» և այլ թեմաներով ցուցադրություններ [Адамян Н., 1943, 26 дек., № 262, 4]:

Գաղափարախոսական աշխատանքը և նրա վերակազմակերպման հարցերը գտնվում էին հանրապետության կուսակցական-պետական ղեկավարության ամենօրյա ուշադրության կենտրոնում: Պահանջվում էր նվազագույն ժամկետներում կազմակերպել թիկունքի աշխատանքները, կուսակցական և մշակութային հաստատությունների ամբողջ գործունեությունը ենթարկել ռազմաճակատի պահանջներին՝ ելնելով այն ճշմարտությունից, որ ոչ մի հզոր բանակ չի կարող հաջողության հասնել առանց կայուն և ամուր թիկունքի: Քաղաքական աշխատանքների կարևոր ձև էր համարվում ազիտացիան՝ քարոզչական աշխատանքը: Ստեղծագործական միությունների, ուսումնական հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ միասին գրադարանը ևս լծվեց գաղափարախոսական աշխատանքների իրականացմանը:

Գրադարանի գրականության համալրման մեջ կարևորվեց նպատակային, թիրախային համալրումը, ռազմաճակատի, Կարմիր բանակի, թիկունքային իրողությունների, գործարանների ու կոլտնտեսությունների մասին պատմող գրադարանային փաստաթղթերը՝ գրքեր, պարբերականներ, պլակատներ, քարտեզներ, կերպարվեստի նյութեր, լուսանկարներ և այլն:

Ընթացիկ համալրումը իրականացվում էր նվիրյալ աշխատակիցների սակավաթիվ խմբի ջանքերով: Պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ հրատարակությունները սկզբնական շրջանում փոքր տպաքանականերով էին թողարկվում, և անհրաժեշտ քանակներով գրադարանի հավաքածուն համալրելու համար գրադարանի աշխատակիցները մեծ ջանքեր էին գործադրում: Հավաքված նյութերը սպասարկվում էին և՛ ընթերցասրահում, և՛ գրադարանից դուրս: Գրադարանավարները նաև վավերագրեր էին հավաքում պատերազմի մասնակից հայորդիների մասին, զորահրամանատարների կյանքին և անցած մարտական ուղուն նվիրված հատուկ քարտարաններ էին ստեղծում, նյութեր էին տրամադրում պատմաբաններին, գրողներին, ուսանողներին [Նույն տեղում]:

Հավաքված փաստաթղթերը արտացոլում էին ռազմական գործողությունների ամբողջական շղթան՝ թշնամու ուխտադրուժ հարձակումից մինչև առանձին մարտական գործողությունների, բնակավայրերի պաշտպանության ու ազատագրման, ռազմաճակատի ու թիկունքի անսասան կայի, Կարմիր բանակի առաջխաղացման, պատերազմի ընթացքի մեջ բեկում մտցրած ճակատամարտերի նկարագրության ու հաղթական ավարտի մասին:

1942 թ. դեկտեմբերին ՀԽՍՀ ժողովրդական լուսավորության մինիստրության կոլեգիայի նիստում որոշում ընդունվեց ընդլայնել և կատարելագործել Հայրենական Մեծ պատերազմի թեմաներով ցուցադրությունների կազմակերպումը, ավելի մեծ թվով քաղաքացիական ու ռազմական հաստատությունների սպասարկումը: Ռադիոկոմիտեին


հանձնարարվեց եթեր արձակել գրադարանավարների կազմած՝ հակաֆաշիստական, ռազմապաշտպանական գրականության ցանկերով և դրանց ծանոթագրություններով կազմած ցանկերի անվճար ռադիոբյուլետեններ: Պետք էր գրադարանը ապահովել թղթի անհրաժեշտ քանակությամբ, գրենական այլ պիտույքներով՝ հանձնարարական ցանկերի ու հուշաթերթիկների տպագրության համար, ընդլայնել տեղեկատու հավաքածուի համալրումը ռազմապաշտպանական գրականությամբ, այդ գրականությունը տարածելու և հանրայնացնելու նպատակով կազմակերպել գրականության տեսության ամենամսյա միջոցառումներ, բարձրաձայն ընթերցանություն, ռազմական պայմաններում նոր մեթոդներով աշխատելու հմտությունների ուսուցում քաղաքի մյուս գրադարանների աշխատակիցների համար, հանձնարարական, երկրագիտական ցանկեր կազմելու գործում նրանց մեթոդական օգնության ցուցաբերում [Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 122, գ. 16, ց. 2, թ. 64, 65]:

Պատերազմի ընթացքում ԽՍՀՄ արևմտյան տարածքներից, Մոսկվայից, Լենինգրադից բնակչության մի ստվար հատված էվակուացվեց Հայաստան: Նրանց մեջ էին շատ նկարիչ-ձևավորողներ: Պետք է արձանագրել, որ նոր իրավիճակներում աճել էր կերպարվեստի նշանակությունն ու տարածվածությունը, ուժեղանում էր նրա հանրային նշանակությունը [Սովետական Հայաստանի գրաֆիկան, 1961, 61]: Հայաստան տեղափոխված նկարիչներ Վասիլի Սուրյանինովը, Լևոն Գենչը, Դմիտրի Նալբանդյանը իրենց երևանաբնակ գործընկերների՝ Հովհաննես Շավարշի, Մարիամ և Երանուհի Ասլամազյանների, Սերգեյ Արուստյանի և մյուսների հետ միասին սկսեցին ներդնել իրենց ջանքերը և ստեղծագործական կարողությունները՝ մասսաների ռազմահայրենասիրական դաստիարակության, զորական ուժի դրվագներով նրանց մեջ հավատ ու լավատեսություն, կամք ու հաստատակամություն ներարկելու գործում: Նրանք ստեղծեցին ռազմաճակատային մամուլի համար նկարներ, իրենց սխրանքներով աչքի ընկած զինվորականների գծանկարներ, պլակատներ, թշնամու գործողություններն ու դավադիր մտադրությունները ծանակող ծաղրանկարներ, պլակատներ: Գրադարանի ֆոնդերում պահպանվում է նրանց ստեղծած պլակատների հարուստ հավաքածուն:

Պատերազմի նախնական փուլում իրականացվող ռազմական մոբիլիզացիայի ընթացքում առանձնահատուկ տեղ է գրավում ազգային ռազմական միավորումների կազմավորումը: Հայ ժողովուրդը ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ ոտքի կանգնեց վտանգված հայրենիքի պաշտպանության խրամատներում: Ազգային դիվիզիաները ձևավորվում էին ԽՍՀՄ Պաշտպանության կոմիտեի պետական կոմիտեի 1941 թ. նոյեմբերի 13-ի որոշման համաձայն [Постановление Государственного комитета обороны о формировании национальных войсковых соединений, 1941]: ՀԽՍՀ տարածքում ձևավորվեցին 89-րդ, 408-րդ, 409-րդ և 261-րդ դիվիզիաները [Арутюнян К., Саакян, 2010, 63]: Նրանցից յուրաքանչյուրի մասին պատմում են գրադարանում պահպանվող խոսուն վավերագրերը:

Հայկական 89-րդ Թամանյան կարմրադրոշ, Կուտուզովի II աստիճանի, Կարմիր Աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիան ձևավորվել է 1941 թ. նոյեմբերի 15-ին Երևանում Անդրկովկասյան ռազմաճակատի 45-րդ բանակի կազմում: Իր ռազմական


ուղին սկսել է Կովկասյան նախալեռներում և հաղթական ավարտը տոնել Բեռլինում [89-րդ Թամանյան կարմրադրոշ, Կուտուզովի II աստիճանի, Կարմիր աստղի շքանշանակիր հայկական հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, 1985, 5]:



Դիվիզիայի առաջին հրամանատարն էր Սիմոն Զաքյանը: Մարտիկների բարոյահոգեբանական, հայրենասիրական, քաղաքական ոգին բարձր պահելու համար առանձնակի ուշադրություն էր դարձվում քարոզչության այնպիսի հզոր միջոցների, ինչպիսիք էին մամուլը, գեղարվեստական գրականությունը, երաժշտությունը: 1942 թ. հունվարից սկսեց լույս տեսնել դիվիզիայի օրգանը՝ «Կարմիր զինվոր» թերթը, որի կարգախոսն էր «Մահ գերմանական օկուպանտներին»:



Թերթի էջերում տպագրվում էին սովետական բանաստեղծների ստեղծագործությունները, ռազմաճակատային թղթակիցների պատումները՝ մարտիկների հերոսական գործողությունների մասին: Նույն թվականին կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը գրեց «Զաքիյանի դիվիզիայի քայլերգը». այն հրատարակեց Հայպետհրատը 500 տպաքանակով [Սաթյան Ա., 1942]:



Դիվիզիան ռազմաճակատ մեկնեց 1942 թ. օգոստոսին և անմիջապես մասնակցեց Կովկասի պաշտպանության մարտերին՝ Թերթի աջակողմյան ափից: Առաջին ամիսների ծանր մարտերից դիվիզիան լուրջ կորուստներ կրեց: 1943 թ. փետրվարի 19-ից հրամանատարությունը ստանձնեց Նվեր Սաֆարյանը, ում ղեկավարությամբ 1943 թ. նոյեմբերից մինչև 1944 թ. մայիսը դիվիզիան փայլուն դրսևորեց իրեն Կուրանի, Թերթի, ապա նաև

Ղրիմի թերակղզու համար մղված մարտերում: Թամանյան կղզու ազատագրման համար դիվիզիան արժանացավ «Թամանյան» պատվավոր անվանը: Դիվիզիան մարտական գործողությունների արդյունքում ազատագրել է ավելի քան 900 բնակավայրեր: Թամանյան դիվիզիան առաջիններից մեկն էր, որ հատեց ԽՍՀՄ պետական սահմանը, անցավ Լեհաստանով և 1945 թ. գարնանը մտավ Բեռլին:

Գրադարանի աշխատակազմը գիտակցում էր իր հավաքածուի բացառիկությունն ու կարևորությունը պատերազմի մասին պատմական հիշողության պահպանման, ժողովրդի հայրենասիրական դաստիարակության, հայրենաճանաչման գործում: Պատերազմի շրջանում քաղլուսավորական հիմնարկների, այդ թվում նաև գրադարանների խնդիրները ավելացել էին և հավաքածուները հափշտակումներից ու կորուստներից զերծ պահելու համար առաջին պլան էին գալիս դրանց հաշվառման, պահպանության, դասավորման, կոմպլեկտավորման, սպասարկման աշխատանքների նպատակային կազմակերպման խնդիրները: Առանձնապես արժևորվում է պարբերական մամուլի՝ թերթերի ու ամսագրերի հաշվառման ու դրանց պահպանության ու լիարժեքության ապահովման խնդրահարույց հարցը. Նպատակահարմար է համարվում դրանք գրանցել ու հաշվառել ոչ թե առանձին համարներով, այլ ըստ տարեկան կամ եռամսյակային կոմպլեկտների՝ մեկ հաշվառային համարի տակ: Հավաքածուների երկարաժամկետ օգտագործումը և պահպանության խնդիրների մասնակի լուծումը ապահովելու համար կարևորվում է դեռևս քսանական թվականներից գործող սեփական կազմատանը դրանց նորոգությունն ու լրակազմի ձևավորումը [Ստեփանյան, 1944, թ. 133, 5 հուլիսի, 2]:

Հայկական ազգային մյուս միավորումը՝ 408-րդ հրաձգային դիվիզիան, ձևավորվել է 1941 թ. օգոստոսին: Դիվիզիան ներգրավված էր ԽՍՀՄ հարավային սահմանների պահպանության և ամրապնդման գործում: Հանրապետության հասարակական ու քաղաքական ղեկավարության ներկայացուցիչները հաճախ էին այցելում դիվիզիայի մարտիկներին և ելույթներ ունենում: Նշանավոր բանաստեղծ Ավետիք Իսահակյանի, հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Մացակ Պապյանի, մշակույթի և արվեստի մյուս ներկայացուցիչների այցելությունները վավերագրած բազմաթիվ նյութեր կան դիվիզիայի պաշտոնական օրգան «Հանուն հայրենիքի» լրագրի էջերում [Հայաստանի ազգային գրադարանի կայքէջ]:



1941 թ. օգոստոսին ձևավորված 409-րդ հրաձգային դիվիզիան մինչև 1942 թ. վերջը պահպանում էր սովետաթուրքական սահմանը Թուրքիայի հնարավոր ոտնձգություններին: Ապա դիվիզիան մասնակցեց Չեչենո-Ինգուշական Ինքնավար Հանրապետության, Ստավրոպոլի, Կրասնոդարի պաշտպանական մարտերին, Հունգարիայի ու Սլովակիայի ազատագրմանը և մարտական ուղին ավարտեց Վիեննայում: Դիվիզիայի անցած մարտական ճանապարհը արտացոլվել է դիվիզիայի «Մարտական դրոշ» թերթի էջերում:



261-րդ հրաձգային դիվիզիան ձևավորվել է 1942 թ. աշնանը: Քանի որ ՀԽՍՀ տարածքը մերձազմաճակատային կարգավիճակ ուներ, և նրա տարածքով էր անցնում պետական սահմանի զգալի հատվածը, ուստի առանձնակի ուշադրություն էր դարձվում հրամանատարական անձնակազմի պատրաստման և ուսուցման վրա: Այստեղ համապատասխան պատրաստություն անցնող զինվորներն ու սպաները մեկնում էին ռազմաճակատ՝ համալրելու գործող բանակի շարքերը: Դիվիզիայի մարտական ուղին վավերագրել է դիվիզիայի պաշտոնական օրգանը՝ «Մարտ հանուն հայրենիքի» թերթը: Հայկական բոլոր դիվիզիաների անձնակազմի 97% -ը հայեր էին:

Հաղթանակի կայացման գործում նշանակալի ներդրում ունեն նաև սփյուռքահայերը: 1943 թ. հունվարի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ արք. Գևորգ Չորեքյանը հեռագրեց ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Իոսիֆ Ստալինին՝ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման նպատակով աշխարհասփյուռ հայերի կողմից նվիրատվությունների համար Պետբանկում հաշվեհամար բացելու խնդրանքով:



Նա միաժամանակ հայտնում էր, որ Կաթողիկոսարանը իր հերթին այդ բարձրագույն նպատակի իրագործմանը նվիրաբերում է ադամանդակուռ մի պանակե, թանկարժեք մետաղներից ու ադամանդներից պատրաստված զարդեր՝ 800 հազար ռուբլի ընդհանուր արժողությամբ, 1000 անգլիական ֆունտ ստեռլինգ և 50000 ռուբլի: Ավելի վաղ Հայրապետը հատուկ կոնդակով հովվական կոչով դիմել էր աշխարհի հայերին՝ իրենց նվիրատվություններով նպաստելու հայրենասիրական կարևոր այդ ձեռնարկի իրականացմանը: Արքեպիսկոպոս Գևորգ Չորեքյանը համոզված էր, որ հանգանակված նյութական միջոցներով ձևավորված տանկային շարասյունը կարևոր ներդրում կլինի Կարմիր բանակի առաջխաղացման, թշնամու վերջնական ջախջախման ու հաղթանակի կերտման գերնպատակի իրականացման մեջ: Հունվարի 26-ին ստացվում է Ի. Ստալինի՝ հավատացյալ հայ ժողովրդին ու Էջմիածնի կաթողիկոսարանին ուղղված շնորհակալական պատասխան նամակը, որում նշում է նաև բանկային հաշվի բացման վերաբերյալ իր ցուցումի մասին: Այս ամբողջը փաստավավերագրված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերանորոգ հայրապետական հանդեսի 1944 թ. առաջին համարի էջերում [Ստալին, 1944, 5]:

1944 թ. հունվարի 29-ին տանկային շարասյանը, որի կազմի մեջ մտնում էր 21 նոր տանկ, հանդիսավոր պայմաններում շնորհվեց Սասունցի Դավիթ անունը: Հրասայլերից յուրաքանչյուրի աշտարակի մի կողմում հայերեն, նյուս կողմում ռուսերեն սպիտակ ներկով գրված էր շարասյան անունը: Շարասյունն ընդունող զինվորականները հանդիսավոր երդվեցին՝ ոչնչացնել ֆաշիստական զավթիչներին ու մեկնեցին ռազմաճակատ:



«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՏԱՆԿԱՅԻՆ ՇԱՐԱՍՅՈՒՆԸ ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՎԵՐՆ ԷՐ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՆ

Հայրենական մեծ պատերազմում հաղթանակը ցույց տվեց, որ խորհրդային ժողովուրդը հոգեբանորեն պատրաստ էր ծանր փորձություններին: Պատրաստվածության ու ներառականության այդ մակարդակը ձեռք էր բերվել կուսակցական, պետական, մշակութային-կրթական հաստատությունների նպատակային և հետևողական աշխատանքի արդյունքում: Այս հաստատությունների շարքում իրապես նշանակալի է գրադարանների ներդրումը, նրա գաղափարադաստիարակչական գործունեության ավանդը ժողովրդի միասնականության, հայրենասիրական քարոզչության գործում [Советская Армения в годы Великой Отечественной войны, 1975, 113]:

Մեծ Հայրենականի մասին պատմող փաստաթղթերը պահպանվում են ՀԱԳ հավաքածուներում: Դրանք ոչ միայն տեսածրվում, արխիվացվում ու պահպանվում են սերվերներում, այլև 7/24/365 ռեժիմով հասանելի են հանրությանը: Ստեղծված են նաև դրանք նշաճանաչված տարբերակները: Հայաստանի ազգային գրադարանը մշակութային, պատմական ժառանգությունը հանրայնացնելու իր առաքելությանը հավատարիմ՝ հանրայնացնում և սերունդներին է հասցնում Հայրենական Մեծ պատերազմի մասին պատմող վավերագրերը, որպեսզի ոչ ոք և ոչինչ երբեք չմոռացվի:

SUMMARY

The contribution of Armenia and the Armenian people to the Victory over Germany was significant. The patriotism and devotion of the people were demonstrated not only at the front, in heavy fighting, in the trenches, on the ground and in the air, but also in the rear. A strong and reliable rear largely ensured success at the front. The article presents some episodes of the activities of the A. Myasnikyan State Public Library (now the National Library of Armenia) during the war years. The library management focused not only on mass events, but also on operational work on the current acquisition of library collections. Thanks to the replenishment and preservation of library collections, valuable documents (books, photographs, posters, newspapers) became objects of research. A brief history of the formation of national military units based on library and archival documents stored in the NLA collections is also presented.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1337, գ. 11, ց. 1, թ. 1:
2. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 122, գ. 16, ց. 2, թ. 64, 65:
3. Գրադարանային գործի պատմությունը Խորհրդային Հայաստանում. Փաստաթղթերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1984, 288 էջ:
4. Սաթյան Ա. Զաքիյանի դիվիզիայի քայլերգը, Երևան, Պետհրատ, 1942, 24 էջ:
5. Սովետական Հայաստանի գրաֆիկան, Երևան, Հայպետհրատ, 1961, 183 էջ:
6. Ստալին Ի., Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ Տ. Գևորգ արք. Չորեքյանին // Էջմիածին, Վաղարշապատ, 1944, Ա, 5 էջ:
7. Ստեփանյան Ա., Պահպանենք գրադարանային ոսկե ֆոնդը // Խորհրդային Հայաստան, Երևան, 1944 թ. 133, 5 հուլիսի, էջ 2:

8. 89-րդ Թաւանյան կարմրադրոշ, Կուսուղոյի II աստիճանի, Կարմիր աստղի շքանշանակիր հայկական հրաձգային դիվիզիայի մարտական ուղին / Կազմ.՝ Ա. Հ. Հարությունյան և ուրիշ, Խմբ.՝ Ա.Հ. Հարությունյան, Ա.Մ. Հակոբյան, Երևան: Ա. հ., 1985, 748 էջ:
9. Адамян Н., Публичная библиотека Армении в дни Отечественной войны // Коммунист, Ереван, 1943, 26 дек., № 262, С. 4.
10. Армянский народ – боевой участник освободительной войны Советского Союза // Правда, Москва, 1941, 25 авг., № 235, С.1.
11. Арутюнян К., Участие армянского народа в Великой Отечественной войне (1941-1945) НАН РА, Ин-т истории, Ереван, Гитутюн, 2004, 868 с.
12. Арутюнян К., Саакян М., Вклад армянского народа в победу в Великой отечественной войне (1941–1945), Ереван, Гитутюн, 2010, 874 с.
13. Постановление Государственного комитета обороны о формировании национальных войсковых соединений. 13 ноября 1941 г. // Электронная библиотека исторических документов [Электронный ресурс] URL: <https://docs.historyrussia.org/ru/nodes/124003-postanovlenie-gosudarstvennogo-komiteta-oborony-o-formirovanii-natsionalnyh-voyskovykh-soedineniy-13-noyabrya-1941-g> (10.06.2025).
14. Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945): Сборник документов и материалов / Сост.: В.А. Мурадян и др, Ереван, Изд-во АН Арм. ССР, 1975, 842 с.

ՊԵՏՐՈՍՅԱՆՑ ՏԻՓՐԱՆ

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական գրադարան

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԱՂՈՆԱ

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական գրադարան

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցի, Թիֆլիս, Վիրահայոց հոգևոր թեմ, Ներսիսյան դպրոց, հոգևոր դպրոցի կանոնադրություն, Շահան Զրպետ, Սերովբե, Հարություն Ալամդարյան, կաթողիկոս Մատթեոս Կոստանդնուպոլսեցի, Ալեքսանդր Երիցյան:

Keywords: Nerses ark'episkopos Ashtarakets'I, T'iflis, Virahayots' spiritual diocese, Nersisyan school, theological school charter, Shahan Jrpet, Serovbe, Yawt'iwn Alamdarean, catholicos Matt'eos Kostandnwpolsets'i, Alek'sandr Erits'ean.

Ներածություն

Արևելահայ դպրոցի կայացման ծիրում 1820-1860-ական թվականներին զգալի առաջընթաց է արձանագրվել: Դրանք նախադրյալներ են ստեղծել հաջորդ տասնամյակներում ազգային կրթությանը նոր մղում հաղորդելու համար: Այդ գործում իր անփոխարինելի ներդրումն է ունեցել Ներսիսյան հոգևոր դպրոցը: Դպրոցի գործունեությունը որոշ առումներով կանխատեսելի է դարձրել դպրոցի կանոնադրությունը: Տվյալ ուսումնասիրությունը նվիրված է Ներսիսյան հոգևոր դպրոցի կանոնադրության ստեղծման և գործադրման պատմությանը:

Հետազոտության նպատակը: Արժևորել Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի գործունեությունն ապահոված կանոնադրության ստեղծման պատմությունը:

Հետազոտության արդիականությունը: Հայոց կրթական-լուսավորչական ծիրում Ներսիսյան հոգևոր դպրոցի, իր տիպի մեջ առաջնեկի, գործունեության կարգավորող փաստաթղթի՝ կանոնադրության ստեղծման պատմությունն ու առանձնահատկությունները:

Հետազոտության նորույթը: Ներսիսյան հոգևոր դպրոցի կանոնադրության ստեղծման պատմության ներկա արտացոլումը հետազոտության նորույթն է՝ նրա փուլային ստեղծման հանգրվանները: Կանոնադրության ստեղծման ուղղությամբ ձեռնարկված հետևողական գործողությունները:

Հետազոտության խնդիրը: Ներկայացնել 1819-1864 թվականների ընթացքում Ներսիսյան հոգևոր դպրոցի համար ստեղծված կանոնադրությունների քննարկված տարբերակները, դրանց առանձնահատկությունները, հնարավորինս բացահայտել-վերլուծել դրանց մերժման հանգամանքները:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Հետազոտությունն իրականացվել է պատմական, համեմատական, վերլուծական, ընդհանրացման մեթոդների համակցման օգնությամբ:

Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի կանոնադրության ստեղծման պատմությունը անցել է լրամշակման յոթ փուլ (1819-1857 թթ.): Չնայած այն հանգամանքին, որ ժամանակին Ներսես կաթողիկոսի գրած կանոնադրությունը լավագույնս կարող էր ծառայել այդ նպատակին, բայց այնուամենայնիվ պահանջկոտ թեմակալը փնտրել է մարդկանց, որ կանոնադրության նախագծեր ներկայացնեն, որոնցից ոչ մեկը թեմակալ առաջնորդի, ապա Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից չի հաստատվել: Դպրոցի կանոնադրությունը 1860-ական թվականներին բազմիցս լրամշակվելով՝ միայն 1864 թվականին հաստատվել է և երկու տարի անց առանձին գրքույկի տեսքով հրատարակվել է:

1717 թվականին հեռավոր Իտալիայի Վենետիկ քաղաքի Սուրբ Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանության արքահայր Մխիթար Մեքաստացին վանքին կից հիմնել է ճեմարան (ակադեմիա): Հաջորդող քսան տարիների ընթացքում նա Եվրոպայի տասից ավելի երկրներում հիմնել է մայր դպրոցի մասնաճյուղեր:

1810 թվականին Աստրախանում բացվել է Աղաբաբյան դպրոցը: 1815 թվականին Լազարյանները դպրոց են հիմնել Մոսկվայում:

Հայաստանից դուրս հայկական դպրոցներ են հիմնվել նաև այլ երկրներում:

Իր առջև Էջմիածնում դպրոց ստեղծելու խնդիր էր դրել նաև Էջմիածնի ազդեցիկ միաբան Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին: Բայց նա իր երազանքն իրականացնելու լուրջ հնարավորություն ունեցավ 1814 թվականից հետո՝ նշանակվելով Վիրքի հոգևոր թեմի առաջնորդ: Մինչև մեծ պլանների իրագործումը նա Թիֆլիսի Վանքի առաջնորդանիստ եկեղեցու հյուսիսակողմի խցերում հիմնել է փոքրիկ դպրոց, որտեղ ուսանել են քահանաների երկու տասնյակ երեխաներ: Բայց այդ չէր նրա նպատակը: Նա երազում էր ստեղծել Մխիթարյանների ճեմարանի տիպի դպրոց, որտեղ հնարավոր կլիներ կրթություն ապահովել շատերի համար և լուսավորչական դերակատարություն իրականացնել հայ բնակչության համար: Իր այդ ֆանտաստիկ նպատակի իրականացման համար նա միջոցների ներգրավման աշխատանք է ծավալել թեմի առաջնորդ նշանակվելու առաջին օրերից: Հավաքագրված գումարով նա 1821 թվականի սեպտեմբերի 16-ին սկսել է դպրոցի շենքի կառուցումը: 1824 թվականին երազանքի դպրոցի շենքն իրականություն է դարձել [Երիցեանց, 1898]:

Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու հիմնած դպրոցը, որ 1861 թվականի հունիսի 9-ին Մատթեոս Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի արձակած կոնդակով ստացել է

«Ներսիսյան դպրոց» անունը, XIX-XX դարերում, Հայաստանում և Հայաստանից դուրս գործած դպրոցների մեջ ամենահայտնին էր: Այն բացառիկ ներդրում է ունեցել հայ ժողովրդի լուսավորչական, դաստիարակչական, մշակութային, հրատարակչական կյանքում: Այդ դպրոցից դուրս են եկել մեծ թվով հայ գրողներ, գիտնականներ, հասարակական-քաղաքական և պետական գործիչներ, հայտնի մանկավարժներ:

Ինչպես ցանկացած կառույցի, այդպես էլ ստեղծվելիք դպրոցի կենսագործունեությունն իրագործելու համար անհրաժեշտ է կառավարման գործիք՝ կանոնադրություն: Հասկանալի է, որ այնպիսի խոշոր մշակութային կենտրոն, ինչպիսին էր Ներսիսյան հոգևոր դպրոցը, չէր կարող արդյունավետ գործել առանց ներքին կանոնների, առանց կանոնադրության: Ահա թե ինչու Ներսիսյան հոգևոր դպրոցի գոյության ամենավաղ ժամանակներից սկսած, անգամ դպրոցը չկառուցած, Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին մտահոգված էր դպրոցի կանոնադրության հարցով [Սանթրոսյան, 1964, 397]:

Դպրոց ստեղծելու գաղափարը Ներսես Աշտարակեցու մոտ ծագել է 1807 թվականին, երբ նա ժամանակավորապես զբաղեցրել է Նոր Նախիջևանի առաջնորդական պաշտոնը: Դրա ֆինանսավորման ակնկալիքով նա նամակով դիմել է Լազարյան գերդաստանի ավագ Հովակիմ Լազարյանին: Վերջինս առաջարկել է ներկայացնել բացվելիք դպրոցի մասին ծրագիր: Ներսես վարդապետը 1807 թվականի դեկտեմբերի 5-ին շարադրել է «**Գաղափար կանոնագրին ուսումնարանի, շարագրելոյ ի Ներսես վարդապետէ**» ծրագիր-կանոնադրությունը: Այն բաղկացած էր նախագիտելիքից, վեց գլուխներից, որոնցում ներառված էր 93 հոդված: Բայց դպրոցի բացումը հետաձգվել է: Ներսեսին շտապ կանչել են Մայր Աթոռ: Կրթյալ, ջանադիր, ամենակարող Ներսեսը Մայր Աթոռում արագ բարձրացել է հիերարխիկ աստիճանակարգով, դարձել կաթողիկոս Դանիելի վստահելի անձը: Վերջինս 1808 թվականի հունիսի 21-ին Ներսեսին շնորհել է եպիսկոպոսի և արքայության աստիճան:

Բազմազբաղ եկեղեցականը, Մայր Աթոռի բազում խնդիրներով ծանրաբեռնված, այնուամենայնիվ չէր մոռացել դպրոց բացելու երազանքը: Այստեղ նա բացել է ժառանգավորաց դպրոց հիսուն աշակերտի համար: Նպատակը ավելին էր՝ բացել համալսարան 200 սովորողի համար: Բայց շրջապատի անհաղործողականությունը, բանսարկությունները խանգարում էին: Սերովրե վարդապետը, հակառակվելով ասել է, որ սխալ է պարսկական տիրապետության պամաններում էջմիածնում դպրոց բացել, որ առավել ճիշտ կլինի դպրոց բացել ռուսական կայսրության ենթակա Թիֆլիս քաղաքում:

1814 թվականի սկզբին Վիրքի թեմի առաջնորդ Աստվածատուր արքեպիսկոպոսը թողել է պաշտոնը: Քառասունհինգամյա Ներսես արքեպիսկոպոսին առաջարկվել է այդ թափուր պաշտոնը: Նա ուրախությամբ ընդունել է առաջարկը՝ մտքում ունենալով այդտեղ դպրոց հիմնելու երազանքը:

Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի կանոնադրության ստեղծման պատմությունից

Առաջին փուլ: Ներսիսյան հոգևոր դպրոցի հիմնադրումից առաջ, շինության նախապատրաստության, շինարարության աշխատանքին զուգահեռ, Ներսես Աշտարակեցին մտածել է ապագա ուսումնական կառույցի ներքին կարգ ու կանոնի կարգավորման՝ կանոնադրության ստեղծման հարցով:

1816 թվականից սկսած նա ապագա դպրոցում աշխատելու համար ուսուցիչներ է փնտրել:

Ներսես արքեպիսկոպոսն առաջնահերթ դիտարկել է Ռուսաստանի ուսումնական հաստատություններում պաշտոնավարող անձանց: Լազարյան ճեմարան էր տեղափոխվել Մայր Աթոռից հայտնի, կաթոլիկափոխ **Սերովբե վարդապետը** [Երիցեանց, 1898, 75]: Գևորգ Երեմյան Արծրունին թեմի առաջնորդին ներկայացրել էր Փարիզի ֆրանսիական Արևելագիտության դպրոցում հայտնի գիտնական, հայերեն լեզվի ուսուցիչ **Հակոբ Շահան Զրպետյանի (1772-1837)**² անունը, որին 1817 թվականին անձամբ հանդիպել էր Փարիզում:

Հարցի լուծման համար Ներսես արքեպիսկոպոսը նամակներ է գրել վերը նշված անձանց [Նույն տեղում, 75]: Յուրաքանչյուրին առաջարկել է շարադրել իր մոտեցումը, դպրոցի գործունեությունը կարգավորելու տեսլականը: Սակայն ո՛չ Սերովբե վարդապետը և ո՛չ Շահան Զրպետը չեն բավարարել Ներսես արքեպիսկոպոսի սպասելիքները: Առաջինն իր ծրագրով առաջարկել էր բացել 48 հոգու համար մի գիշերօթիկ՝ սահմանափակ մի վարժարան՝ Մոսկվայի ազնվականական դպրոցի նմանությամբ: Պատասխան նամակին կցվել է հինգ կետից կազմված, ոչինչ չստող ծրագիր: Իսկ Շահան-Զրպետն առաջարկել է ստեղծել մի համալսարան՝ 12 մասնագիտական ֆակուլտետներով, որտեղ պիտի ուսուցանեին անգամ զինվորականություն և նավավարություն: Շահան Զրպետն իր կանոնադրությունն անվանել էր «**Առաջարկութիւնք դպրոցական կարգադրութեանց ի պէտս հայկական ուսումնարանին Տիֆլիզ քաղաքի**»: Դրանում առանձնացվել է հինգ գլուխ, տասներկու ենթագլուխ, հիսուներեք հոդված [Նույն տեղում, 78-84]: Ներսեսի միտքը ո՛չ առաջինն էր և ո՛չ երկրորդը: Թեմակալի նպատակն այլ էր՝ իր դպրոցում պատրաստել կրթյալ հոգևորականներ, գրագիտություն սերմանել երկրի չքավոր և անգրագետ խավերի շրջանակներում: Նրա մտածած դպրոցը պիտի լայնորեն բացեր դռները ցանկացողների առաջ: Սերովբեի և Շահան-Զրպետնի կողմից Ներսես Աշտարակեցուն ներկայացված դպրոցների տիպը և **կանոնադրություններն** առաջնորդին չեն բավարարել և մնացել են թղթի վրա:

² Այսուհետ՝ Շահան Զրպետ:

Ներսես արքեպիսկոպոսն իր դպրոցում պաշտոնավարելու հարցով դիտարկել է նաև նորընծա քահանա **Հարություն Ալամդարյանի (1795-1834)**³ թեկնածությունը: Վերջինս բացի ուսուցչությունից Լազարյանների համար քարտուղարություն է արել և գրվածքներ թարգմանել: Սրբազանին հենց այդպիսի ուսյալ, գործունյա, լեզուների տիրապետող անձ էր անհրաժեշտ: Եվ նա հրավիրել է երիտասարդ քահանային պաշտոնավարելու դպրոցում [Նույն տեղում, 85]:

1824 թվականի աշնանը Հարություն Ալամդարյանը հասել է Թիֆլիս և նշանակվել նորաբաց դպրոցի տեսուչ: Նա առաջարկել է դաստիարակության առաջադեմ ուղիներ, մերժել է ծեծը, աշակերտին կոպտելը համարել ուսուցչի անգործության հետևանք: Նա համոզված էր, որ երեխայի ընդունակությունները պետք է զարգացնել աստիճանաբար՝ գնալով պարզից բարդը:

Հարություն Ալամդարյանը մշակել է նորաբաց հոգևոր դպրոցի վարչական, ուսումնական և բարոյակրթական աշխատանքների կանոններ և Ներսես Աշտարակեցուն է ներկայացրել աշակերտների կարգապահության, մանկավարժական ժողովների և ուսումնական գործընթացի ծրագիրը: Դրա համաձայն.

1. Ուսումնարան կարող են ընդունվել բոլոր սովորել ցանկացողները 8 տարեկանից սկսած՝ առանց տարիքային խտրության:
2. Սահմանվել է ուսումնարանում սովորելու երկու ժամկետ: Կարճ՝ երկու տարով և երկար՝ տասը տարով: Ալամդարյանը նախ որոշել է բացել երեք նախապատրաստական դասարան՝ յուրաքանչյուրը մեկ ուսուցչով, ապա բարձր դասարաններ՝ յուրաքանչյուր առարկայի համար առանձին ուսուցչով:
3. Դպրոցում աշխարհաբարի դասավանդմանը հատուկ տեղ է տրվել: Աշխարհաբարով էին կազմվելու ցածր դասարանների դասագրքերը: Բոլոր առարկաները դասավանդվելու էին հարց ու պատասխանի մեթոդով:
4. Դպրոցի յուրաքանչյուր աշակերտ պարտավոր էր սովորել երեք լեզու՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն կամ պարսկերեն: Այլ լեզուների ուսուցումը կարող էր կազմակերպվել սովորողների ցանկությամբ:
5. Ուսման երեք տարվա ընթացքում սովորողներն անցնելու էին երեք լեզուների գրավարժություն, բառագիտություն, քերականություն, ապա համառոտ քրիստոնեական վարդապետություն և թվաբանություն: Հաջորդ դասարաններում անցնելու էին ճարտասանություն, թվաբանություն, քրիստոնեական վարդապետություն, տրամաբանություն, պատմություն, աշխարհագրություն, գրականություն, երկրաչափություն, հանրահաշիվ, նկարչություն, համաբնաբանություն և բնաբանություն:
6. Ամիսը մեկ անգամ հրավիրվելու էր ուսուցչական խորհրդակցություն՝ աշակերտության բարոյական քննության և այլ հարցերի վերաբերյալ:

³ **Հարություն վարդապետ Ալամդարյան**, եկեղեցական գործիչ, մանկավարժ, բանաստեղծ, Լազարյան ճեմարանի առաջին տեսուչ, 1824-1828 թվականներին Ներսիսյան հոգևոր դպրոցի առաջին տեսուչ, 1828-1829 թվականներին՝ Վիրահայոց թեմի առաջնորդ:

7. Գանակոծություն և ծեծ չպետք է լիներ: Դպրոցում թեթևագույն հանցանքի դեպքում կարելի էր աշակերտին թողնել դասարանում մեկ ժամ ավել կամ մուր քսել երեսին և գրկել ճաշից:

Ալամդարյանի մշակած այս պարզագույն հրահանգները ժամանակավորապես փոխարինել են կանոնադրությանը և մոտ 6 տարի, 1824 թվականի դեկտեմբերից մինչև 1830 թվականի օգոստոսը, կիրառության մեջ են եղել, և այդ ծրագրով դպրոցը բարգավաճում է արձանագրել: Հարություն Ալամդարյանի գործունեության ժամանակահատվածը՝ 1824-1830 թվականները, դպրոցի պատմության մեջ հիշվել է **«Դար Ալամդարեանի»** անվամբ [Նույն տեղում, 85]:

Ալամդարյանի ծրագիրն այնուամենայնիվ հոգևոր դպրոցի կանոնադրություն չի դարձել:

1836 թվականին հրատարակվել է ցարական կառավարության **«Պոլոժենիե»-ն**: Այդ փաստաթղթի համաձայն՝ հայոց հոգևոր դպրոցներն ու վարչությունները պարտավոր էին մանրամասն կանոններ սահմանել դպրոցի ներքին կարգի, ուսման ընթացքի կարգի վերաբերյալ և սինոդի միջոցով դրանք հաստատման ներկայացնել վերադաս մարմիններին: «Պոլոժենիե»-ի 8-րդ գլխի՝ 112, 113, 114, 115, 116 հոդվածներով օրինականացվում են Էջմիածնի կաթողիկոսության իրավունքները՝ ղեկավարելու և տնօրինելու հայ ժողովրդի լուսավորության բնագավառը: Դրանով միայն եկեղեցուն է իրավունք վերապահվել կարգավորելու դպրոցական գործը, միայն նրա միջոցներով էր թույլատրվել բացել ու պահել հայկական դպրոցները [Սիմոնյան, 1971, 114-115]:

Այս հրահանգի պարագայում ևս Թիֆլիսի հոգևոր դպրոցը 18 տարի գործել է առանց կանոնադրության:

Երկրորդ փուլ: Եվ միայն 1848 թվականին հոգաբարձուների խորհրդին հանձնարարվել է դպրոցի համար ստեղծել կանոնադրություն [Սանթրոսյան, 1981, 216-217]: Կազմվել և Վեհափառին է ներկայացվել կանոնադրության չորս ծրագիր.

1. **«Վասն Ներսեսիան դպրոցի»**, որը ոչ ոքի կողմից ստորագրված չի եղել, հեղինակն էլ անհայտ էր: Վեհափառի ձեռքով մակագրված է, որ դրանում ոչ մի պիտանի բան չկա:
2. **«Կարգադրութիւն»**՝ կրկին առանց ստորագրության:
3. Ծրագիրը դարձյալ անստորագիր էր: Այն շատ պարզ նկարագրել է այն ժամանակվա աշակերտների վարքն ու բարքը և դպրոցի մեջ եղած ուղղությունները:
4. **«Տրամադրութիւն (պրոյեկտ) կարգադրութիւն Ներսիսեան հայոց եկեղեցական ուսումնարանի ի Թիֆլիս քաղաքի հոգաբարձութեամբ պատրիարք կաթողիկոսի Ամենանն Հայոց Ներսեսի»**:

Կանոնադրությունների այս նախագծերից ոչ մեկը, ինչպես և առաջին փուլի պարագայում, հավանության չի արժանանացել Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու կողմից:

Երրորդ փուլ: Այնուամենայնիվ դպրոցը չէր կարող առանց կանոնադրական կարգավորումների շարունակել գործել: 1848 թվականի մայիսի 16-ին, տեսուչ **Կարապետ վարդապետ Շահնազարյանցի** օրոք, վերը թվարկված չորրորդ կանոնադրությունն ընդունվել է՝ **«Տրամադրութիւն Ներսիսեան հայոց եկեղեցական ուսումնարանի**

հաստատելոյ ի Թիֆլիս քաղաքի հոգաբարձութեամբ պատրիարխ կաթողիկոսի Ամենայն Հայոց Ներսէսի» վերնագրով: Սակայն այս կանոնադրությունը վերջնական չէր [Նույն տեղում, 187]:

1849 թվականի հոկտեմբերին Թիֆլիս է ժամանել **Պետրոս Շանշյանը (1819-1889)**: Նա ընդունելության է արժանացել Վեհափառ Հայրապետի, դպրոցի սաների կողմից և նշանակվել դպրոցի տեսուչ: Սակայն նրա կարճատև տեսչությունը ապարդյուն է անցել:

Դպրոցի համար տեսուչ ունենալը շատ կարևոր էր, իսկ այդ պաշտոնի համար հարմար անձ չէր գտնվում [Հարությունյան, 2024, 155]⁴: Վեհափառի մտերիմ անձինք միջնորդել են, որ այդ պաշտոնը հանձնի քաղաքի Նորաշէն եկեղեցու քահանա **Տէր-Գաբրիէլ Պատկանեանցին (1802-1889)**⁵, բայց Վեհափառը, իրեն հայտնի պատճառներով, դժվարացել է նրան տեսուչ կարգել [Երիցեանց, 1898, 473]:

Չորրորդ փուլ: Ներսէս կաթողիկոսը 1850 թվականի հունվարից թույլ է տվել Պատկանյանց քահանային միաժամանակ վարել դպրոցի տեսչի պաշտոնը, բայց առանց գրավոր հաստատության: Միևնույն ժամանակ Վեհափառը հայոց լեզվի ուսուցիչ **Հակոբ Կարենյաեցին (1813-1872)** և ռուսաց լեզվի ուսուցիչ **Միքայել Պատկանեանցին (1814-1895)**⁶ պատվիրել է ընդհանուր խորհրդածությամբ հոգաբարձության և մյուս ուսուցիչների հետ կանոնադրություն կազմել և ուղարկել իրեն Էջմիածին՝ հաստատելու համար [Նույն տեղում, 476]: Վերջիններս, պատճառաբանելով ժամանակի սղությունը, կազմել են մի տեքստ, որ կանոնադրական որևէ աղերս չի ունեցել և ուղարկել են Վեհափառին: Փաստորեն նրանց հորինած տեքստն ընդհանրապես չի արժանացել Ներսէս կաթողիկոսի հավանությանը, այլ նկատողության է արժանացել, մասնավորապես՝ կրոնի դասագրքերի հետ կապված հարցերով [Նույն տեղում, 481-484]:

Հինգերորդ փուլ: 1858 թվականի վերջին Ներսիսյան հոգևոր դպրոցի հոգաբարձությունը ուսումնարանի տեսչի պաշտոնի համար հրավիրել է **Հովհաննես Ղայթմազեանցին (1827/8-1872)**: Վերջինս հանձն է առել պաշտոնավարել՝ առանց որևէ վարձատրության: Միայն պայմանով, որ հոգաբարձությունը ուսումնարանի ներքին գործերի մեջ չխառնվի: Հովհաննես Ղայթմազեանցը (**Իվան Լազարևիչ Կայթմազով**, հավանաբար՝ Հովհաննես Ղազարի Ղայթմազեանց)⁷ խորհրդակցել է հոգևոր տեսչության, հոգաբարձության, ուսուցիչների հետ և ներկայացրել մի նոր **կանոնադրություն** [Մխիթարյան, 1974,

⁴ Խնդիրը այն էր, որ տարաձայնություններ էին առաջացել Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների և Շանշյանի միջև: Ուսումնական մասի ամբողջ ղեկավարությունը կենտրոնացված էր հոգաբարձուների ձեռքում: Շանշյանը Ներսէս կաթողիկոսին առաջարկել է, որ ուսումնական մասի ամբողջ ղեկավարումը հանձնվի տեսչի տնօրինությանը, սակայն վերջինիս առաջարկը մերժվել է կաթողիկոսի կողմից: Շանշյանը հեռացել է Ներսիսյան դպրոցից:

⁵ **Գաբրիէլ Մերովբէի Պատկանեանց**, հայ բանաստեղծ, արձակագիր, պատմաբան, մանկավարժ, գրական-հասարակական գործիչ, տպագրիչ-խմբագիր:

⁶ **Միքայել Մերովբէի Պատկանեանց**, հայ դրամատուրգ, թատերական գործիչ, թարգմանիչ, խմբագիր:

⁷ 1845 թվականին ավարտել է Թիֆլիսի գիմնազիան: 1845 թվականին դարձել է Սանկտ-Պետերբուրգի համալսարանում բացված արևելյան լեզուների բաժնի առաջին ուսանողը: 1848 թվականին համալսարանն ավարտել ու գործուղվել է Թիֆլիս՝ Կովկասի գրաքննչական կոմիտե: 1851 թվականի մայիսի 18-ին նշանակվել է այդ կոմիտեի հայկական և արևելյան լեզուների գրաքննիչ: 1853 թվականին հաստատվել է ավագ գրաքննիչի պաշտոնում:

104]: Այդ կանոնադրությունը ժամանակավորապես հոգևոր և քաղաքացիական կողմերը միաբանել է: Սակայն կարճ ժամանակ անց սկսվել են հակասությունները: Տարածվել է լուր, թե այդ կանոնադրությունը խոչընդոտ է մի շարք մարդկանց ազատ գործելու իրավունքի դեմ: Կանոնադրությունը չի հաստատվել: Դպրոցի տեսուչ Հովհաննես Ղայթմազյանը, որ զիջումների էր գնացել բարենորոգումների, կանոնադրություն ունենալու հույսով, հրաժարական է տվել:

Վեցերորդ փուլ: Դպրոցի կանոնադրության հարցը վերածվել է անլուծելի խնդրի կղերական հոգաբարձության և հոգևորականության ուժեղ դիմադրության պատճառով: Վերջիններս գտել են, որ կրթական գործի ղեկավարը եկեղեցին է, իսկ ժողովուրդը միայն պետք է նյութական օժանդակություն ցույց տա: Այս մտայնությունն ավելի է ուժեղացել Ներսես Աշտարակեցու մահից հետո (1857)՝ Վրաստանի թեմական առաջնորդ **Սարգիս եպսկոպոս Զալալեանցի (1810-1879)** օրոք:

Կանոնադրության ստեղծման ամբողջ էպոպեան իր հրատարակած «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրում լավագույնս ներկայացրել է Թիֆլիսի «Էնֆիաճեանց» տպարանի սեփականատեր, հրատարակիչ, մտավորական, Թիֆլիս քաղաքի հասարակական վարչության անդամ **Համբարձում Էնֆիաճեանը (1824-1896)** [Էնֆեաճեանց, 1861; Սիրեկանյան, 2023]:

Որպես լուծում՝ դպրոցի դեմոկրատացման կողմնակից **Համբարձում Էնֆիաճեանն** իր մեծածավալ հոդվածին կից ներկայացրել է մի նոր կանոնադրություն՝ **«Սահմանադրութիւն»** վերնագրով:

Այս կանոնադրությունը բաղկացած էր հետևյալ գլուխներից՝

Ա. Ընդհանուր կանոնք ուսումնարանին Հայոց Թիֆլիզոյ:

Բ. Յաղագս կառավարութեան Ներսիսեան հոգևոր դպրոցին Թիֆլիզոյ:

Գ. Յաղագս տեսչի դպրոցին:

Դ. Յաղագս որդեգիր աշակերտաց:

Ե. Յաղագս երթեւեկ աշակերտաց:

Զ. Յաղագս ուսանելի առարկայից:

Է. Յաղագս արտոնութեանց աշակերտաց հոգևոր դպրոցին Թիֆլիզոյ:

Ը. Յաղագս տնտեսական կառավարութեան որդեգրաց դպրոցին:

Թ. Յաղագս եկամտից դպրոցին Թիֆլիզոյ:

Ժ. Յաղագս ծախուց դպրոցին:

Սահմանադրության տասը գլուխներում ընդհանուր ներառված է 62 հոդված [Էնֆիաճեանց, 1861]:

Այս Սահմանադրություն-կանոնադրության **«Յաղագս տնտեսական կառավարութեան որդեգրաց դպրոցին»** գլխում առաջին անգամ ներառվել է հետևյալ հոդվածը՝ «Ի հոգևոր դպրոցին գտանի առանձին մատենադարան, յորում պահպանին մատենաք վասն աշակերտաց, պահպանութիւն մատենադարանին յանձն լինի միում ի վերակացուաց կամ յուսուցչաց ըստ նկատման Հոգաբարձութեան»: Բնարկե, դպրոցն ի սկզբանե ունեցել

է պահեստային մասի նմանող տարածք, որտեղ պահվել են դպրոցի տպարանի հրատարակած գրքերը, բայց այն մատենադարան իմա՝ գրադարան կոչվել է այս սահմանադրական հոդվածով:

Ամենայն հավանականությամբ հենց այս կանոնադրությունն էլ ներկայացվել է Ամենայն Հայոց կաթողիկոս **Մատթեոս Կոստանդնուպոլսեցու (1802-1865)** հաստատմանը: 1861 թվականի հունիսի 9-ին Վեհափառն անդրադարձել է խնդրին և առաջնահերթ դպրոցին շնորհել **«Ներսիսյան»** անվանումը⁸: Փաստորեն կանոնադրության խնդիրը կրկին բաց է մնացել:

Ամենայն հավանականությամբ այն որոշակի փոփոխությունների է ենթարկվել և բժիշկ **Հարություն Հովհաննիսեանցի** (1864-1865) տեսչության օրոք ներկայացվել ու 1864 թվականին արժանացել է Կովկասի փոխարքայի հավանությանը:

Յոթերորդ փուլ: Կանոնադրության լրամշակման աշխատանքը շարունակվել է: Վերջին լրամշակված տարբերակը կազմվել է վեց գլխից և ներառել է 80 հոդված: 1864 թվականի օրինակում առաջին անգամ հիշվել էր մատենադարանը: Լրամշակված տարբերակում այն դարձել է Դ գլխի 63-րդ հոդվածի 3-րդ կետ՝ գրադարան, դրա տակ՝ 4-րդ կետ՝ թանգարան բնական գիտութեանց:

Այդ լրամշակված վերջնական տարբերակը հրատարակվել է 1866 թվականին⁹, վերահրատարակվել՝ 1877 թվականին¹⁰:

Վերլուծություն

Ներսիսյան հոգևոր դպրոցի հիմնադիր Ներսես Աշտարակեցին դպրոց բացելու նպատակ հետապնդել է դեռևս Նոր Նախիջևանի կարճատև առաջնորդության ժամանակ, 1807 թվականին: Հենց այդ նպատակով էլ կազմել է իր երազային-դպրոցի ծրագիր-կանոնադրությունը: Թեև ավելի ուշ դպրոց է բացել Մայր Աթոռում, բայց նրա ամենամնայուն գործը Վիրքի թեմակալ առաջնորդ նշանակվելուց հետո հիմնած Ներսիսյան հոգևոր դպրոցն է: Այս հռչակավոր դպրոցի հիմնադրումից առաջ անգամ Ներսես Աշտարակեցին մտածել է մի այնպիսի մնայուն կանոնադրություն ունենալ, որ մշտապես ծառայի ուսուցչական կոլեկտիվի և սովորողների պահանջների բավարարմանը: Թեև ժամանակի իր գրած կանոնադրությունը լավագույնս կարող էր ծառայել այդ նպատակին, բայց պահանջկոտ թեմակալը փնտրել է մարդկանց, որ կանոնադրության նախագծեր ներկայացնեն:

⁸ Թեև ոչ պաշտոնապես՝ 1826 թվականից թե դպրոցը, թե դպրոցին կից տպարանը կրել են Ներսիսեան անունը:

⁹ Կանոնադրություն Ներսիսեան Ազգային հոգևոր դպրոցին Տփլիսոյ: Թիֆլիս, տպ. Հ.Էնֆիաճեանցի: 1866, 32 էջ, շարվ. 11,5x9,5 սմ: Տպաքանակը՝ անհայտ: Հ.Ա.Ղազիկեանը տպարանը նշել է Ներսիսեան, տպագրության թվականը՝ հարցականով, առանց էջերի քանակի: Գինը՝ 15 կոպեկ: Առկա է Հայաստանի ազգային գրադարանում:

¹⁰ Կանոնադրություն Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցին Տփլիսոյ: Երկրորդ տպագրություն: Ի տպարանի Համբարձում Էնֆիաճեանց եւ ընկեր., 1877, Տփլիս: Տպաքանակը՝ անհայտ: Գինը՝ 15 կոպեկ: Առկա է Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գրադարանում (նկարագրության Հ^տ 1134, 1135):

1819-1857 թվականներին նրա ճանաչած հայտնի մարդիկ կանոնադրության յոթ նախագիծ են ներկայացրել որոնցից որևէ մեկը թեմակալ առաջնորդը, ապա՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը չեն հաստատել: Այդպես էլ Վեհափառի սրտի դպրոցը նրա կենդանության տարիներին հաստատված կանոնադրություն չի ունեցել: Շուրջ երկու տասնամյակ գործել է Հովսեփի Ալամդարեանցի կազմած ծրագրի շրջանակներում: Դպրոցի կանոնադրությունը, 1860-ական թվականներին բազմիցս լրամշակվելով, միայն 1864 թվականին հաստատվել է և երկու տարի անց առանձին գրքույկի տեսքով հրատարակվել: Վերլուծելով կանոնադրության բոլոր փուլերում ստեղծված օրինակները, դրանցում հմնականում դիտարկվում են ժամանակի ընդունված տարբերակներ, որոնք մի մասով չէին բավարարում Վեհափառ Ներսես Աշտարակեցուն, բայց նաև հանդիպում էին ժամանակի հոգեբարձու-գործիչների դիմադրությանը, որոնք ցանկանում էին դպրոցը կառավարել իրենց անունից, առանց դպրոցի տնօրինության: Ի վերջո 1864 թվականին հոգաբարձուների խորհուրդը և դպրոցի տնօրինությունը ամաձայնությամբ ներկայացրել են նոր կոչվող, բայց բազմիցս վերամշակված տարբերակը, որը մինչև 1924 թվականը, առանց փոփոխության ծառայել դպրոցի գործունեության իրականացմանը:

SUMMARY

Significant progress was recorded in the establishment of the Eastern Armenian school in the years 1820-1860. The Nersisyan Spiritual School made an irreplaceable contribution to that work. This study is dedicated to the history of the creation and implementation of the charter of the Nersisyan Spiritual School.

Nerses Ashtarakets'I, thought of having such a statute that would always serve to meet the demands of the teaching staff and students. Although a charter he wrote at the time would best serve that purpose. The charter of the school was revised many times in the 1860s and was only approved in 1864.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Երիցեանց Աղէքսանդր, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրոցի որ ի Թիֆլիզ (1824-1899 թ.), Հատոր Ա (1824-1850 թ.) վեց պատկերով, Թիֆլիզ, տպար. Յ.Մարտիրոսեանցի, 1898, 496 էջ:
2. Էնֆեաճեանց Համբարձում, Ներսիսեան հոգեւոր դպրոց Հայոց Թիֆլիզումը // «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիր, Բ տարի, թիւ Գ. մարտ, 1861, էջ 225-240:
3. Էնֆեաճեանց Համբարձում, Սահմանադրութիւն // «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագիր, Բ տարի, թիւ Գ. մարտ, 1861, էջ 241-246:
4. Կանոնադրութիւն Ներսիսեան Ազգային հոգեւոր դպրոցին Տփլիսոյ, Թիֆլիս, տպ. Հ.Էնֆիաճեանցի, 1866, 32 էջ:
5. Կանոնադրութիւն Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցին Տփլիսոյ, երկրորդ տպագրութիւն, Ի տպարանի Համբարձում Էնֆիաճեանց եւ ընկեր., Տփլիս, 1877, 32 էջ:

6. Հարությունյան Մ., Պետրոս Շանշյանի բարենորոգչական գործունեությունը (համառոտ ակնարկ) // Կրթությունը և գիտությունը Արցախում, հունվար-հունիս 1-2, Արցախ, 2024, էջ 155:
7. Մխիթարյան Մ.Հ., Կովկասի գրաքննական կոմիտեի նյութերից // ՀԽՍՀ ԳԱ Պատմա-բանասիրական հանդես, 1974, թիվ 3, էջ 105:
8. Սանթրոսյան Մ.Հ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, Հայպետուսմանկ հրատ, 1964, 447 էջ:
9. Սանթրոսյան Մ. Հ., Ներսիսյան դպրոցի պատմություն, «Լույս», Երևան, 1981, էջ 216-217:
10. Սիմոնյան Յ., Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, ԵՊՀ, Երևան, 1971, 264 էջ:
11. Սիրեկանյան Տիրուհի, «Էնֆիաճեանց» տպարանի դերը 1856-1870 թվականների Թիֆլիսի հայ գրատպության զարգացումներում // Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 2023, Հ^տ8.2, (45), էջ 132-146:

ՄԱՐՈՒՄՅԱՆ ՆՈՒՆԵ

Հայաստանի ազգային գրադարան
Երևանի պետական համալսարան
Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա

ԱՐՅԱԽ-ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌԿԱ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ «ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ»-ՈՒՄ («ОТЧЕТЪ ИМПЕРАТОРСКОЙ
АРХЕОЛОГИЧЕСКОЙ КОМИССИИ»)

Բանալի բառեր՝ դամբարանաբլուր, հնագիտական հանձնաժողով, Արցախ-Ղարաբաղ, պեղումներ, պատմական վկայություն, Շուշի, Ռեալական ուսումնարան, պատմության և մշակույթի հուշարձաններ, պատմամշակութային ժառանգություն, Ակնադքյուր, Առաջածոր, Ելիզավետապոլի նահանգ:

Keywords: burial mound, archeological commission, Artsakh-Karabakh, excavations, historical evidence, Shushi, Realist school, historical and cultural monuments, historical and cultural heritage, Aknahpyur, Aragatsadzor, Elizavetapol province.

Նախաբանի փոխաբեն՝

*Ժողովուրդը և երկիրը հանդիսանում են պատմության
սուրբեկտներ, իրենց յուրահատուկ անցյալով,
պատմության ու մշակույթի աչքի ընկնող
հուշարձաններով:*

Պատմության և մշակույթի հուշարձանները մեր անցյան են, մեր հիշողությունը և մեր պատմությունը: Պատմության և մշակույթի հուշարձաններին վնաս հասցնելը այսօր որոշ պետությունների կողմից դարձել է ապրելառժ, սովորական գոյամիջոց:

Հետազոտությունները ցույց են տվել, որ պատմության և մշակույթի հուշարձաններին վնաս հասցնող մի քանի գործոններ գոյություն ունեն: Այդ գործոններից երկուսը բնական են. առաջինը՝ դա ժամանակն է, իսկ երկրորդը՝ բնության գործոնը: Դրանք քայքայում և թուլացնում են հուշարձանները: Սակայն շատ հաճախ այս երկու բնական երևույթներին գումարվում է նաև երրորդ գործոնը՝ մարդկայինը: Հաճախ մարդիկ վնաս են հասցնում պատմամշակութային ժառանգությանը, աղճատում են հուշարձանները կամ դրանց հարակից պատմական միջավայրը, պղծում են իրենց բռնարարքներով՝ նպատակ ունենալով հիմնահատակ վերացնել հուշարձանը՝ փոխելով պատմական հնավայրի տեսքը, խեղաթյուրելով պատմությունը:

Ներկա աշխարհաքաղաքական բարդ պայմաններում ազգային հնությունների արժևորումն ու պահպանումը հատուկ և զգուշավոր վերաբերմունք է պահանջում, իսկ նրանց ուսումնասիրությունն ու նորովի մեկնաբանումը՝ ավելի կարևորվում:

Ինչպես ականատես եղանք, 21-րդ դարում՝ համայն մարդկության լռության ներքո իրականացվեց Արցախ աշխարհի էթնիկ զտում: Ադրբեջանական իշխանությունների վերահսկողության տակ անցած Արցախում շարունակաբար տեղի են ունենում պատմամշակութային կոթողների բռնալուրացում, պատմության խեղաթյուրում, ամեն հայկականի ոչնչացում, պատմական հայկական հայրենիքի կործանում: Այս ամենը օրակարգային խնդիր է դարձնում Արցախ աշխարհի մասին պատմական վկայությունների նորովի բարձրաձայնումն ու հրապարակումը:

Այսօր՝ հայկական տարածքային կորուստների պայմաններում մենք կանգնած ենք ազգային հնությունների, ազգային հիշողության կորուստի առաջ:

Հողվածում անդրադարձ է կատարվում Հայաստանի ազգային գրադարանում պահպանվող բազմաթիվ արժեքավոր աղբյուրներից մեկի՝ «Կայսերական հնագիտական հանձնաժողովի հաշվետվություն» («Отчетъ Императорской археологической коммиссии» - այսուհետ՝ ОИАК) զեկուցագրերի մեջ ներկայացվող վկայություններին¹¹:

Ուստի, սույն հոդվածով յուրովի փորձ ենք կատարում վեր հանել և հանրությանը ներկայացնել Արցախ-Ղարաբաղում կայսերական հնագիտական հանձնաժողովի կողմից 19-20-րդ դդ. իրականացված հնագիտական պեղումների որոշ արդյունքներն իրենց սկզբնական բովանդակությամբ հանդերձ (Այս հոդվածը ներկայացվում է որպես «Բանբեր Հայաստանի Գրադարանների» նախորդ՝ 2024/1 համարում հրատարակված նյութի համալրում):

Քաղաքական կորուստների պայմաններում հասունանում է այն գիտակցությունը, որ ազգային հնությունները հպարտության աղբյուր են հանդիսանում և պահանջում են ուսումնասիրություն, պահպանում և զգուշ վերաբերմունք:

Սույն հոդվածով նպատակ ունենք վեր հանել և հանրությանը ներկայացնել Արցախ-Ղարաբաղի վաղ քրիստոնեական տարածք լինելու հանգամանքը՝ ամրակայելով այն Կայսերական հնագիտական հանձնաժողովի կողմից 19-20-րդ դդ. իրականացված հնագիտական պեղումների արդյունքներով, և, միաժամանակ ընդգծել «Կայսերական հնագիտական հաշվետվություններ» տեղեկագրերի արժեքը որպես սկզբնաղբյուր:

Ներկայացվող հոդվածում փորձ է կատարվում խոսել 1894-1897 թթ. Արցախ-Ղարաբաղում իրականացված հետազոտությունների հաշվետվություններին (քանի որ մինչ այս աշխատանքը իրականացնելը, անդրադարձ ենք կատարել 1895 և 1897 թվականներին իրականացված հնագիտական պեղումների հաշվետվություններին, ապա այդ տարիների մասին կխոսենք համառոտ):

¹¹ Սույն տեղեկագրերը հրատարակվել են 1862 թվականից մինչև 1918 թվականը ընկած ժամանակահատվածում, տարին մեկ անգամ՝ ամփոփելով իր մեջ 1858-1859 թթ. մինչև 1913-15 թթ. իրականացված հնագիտական պեղումների տվյալները, թվով 45 հատոր գիրք: Կայսերական հնագիտական հանձնաժողովը Ռուսաստանի առաջին հնագիտական պետական հիմնարկն էր: Տես՝ Բանբեր ՀԳ, 2024/1, էջ 51-60:

Բովանդակություն. Արցախ-Ղարաբաղը Կայսերական
հնագիտական հանձնաժողովի տվյալներով

Կայսերական հնագիտական հանձնաժողովը հիմնադրվել է 1859 թ. փետրվարի 2-ին կոմս Ս.Գ. Ստրոգանովի ներկայացմամբ [Кондаков, 1914, 276]՝ 1850 թվականից Լ.Ա. Պերովի ղեկավարությամբ գործող հնությունները հետազոտող Հանձնաժողովի հիման վրա: Այն ենթարկվում էր կայսերական արքունիքի և տարածքային (հողամասային) նախարարությանը, նիստերը տեղի էին ունենում Ձմեռային պալատում: Հայտնի է, որ 1889 թվականից սկսած հանձնաժողովը միակն էր, որ տրամադրում էր «բաց թղթեր», ըստ որոնց թույլատրվում էր պեղումներ կատարել պետական, քաղաքային և գյուղացիական հողատարածքներում (այսինքն՝ ամենուր, բացառությամբ կալվածատիրական հողատարածքների):

Հանձնաժողովը միաժամանակ զբաղվում էր հուշարձանների վերականգնմամբ ու պահպանմամբ: Հանձնաժողովը լուծարվեց 1919 թվականին, երբ գործընթացը փոխանցվեց նորաստեղծ Նյութական մշակույթի պատմության Ռուսաստանի գիտությունների ակադեմիային:

Հանձնաժողովին իրավունք էր վերապահվում ոչ միայն «իր կամքով ու տեսանկյունով իրականացնել անհրաժեշտ պեղումներ, այլև վերահսկել այդ ուղղությամբ իրագործվող մյուս բոլոր փորձերը, ավելին, մասնավոր անձանց կողմից արդյունահանվող հնության բոլոր առարկաները պետք է, հնարավորության դեպքում, տեղական իշխանությունների միջոցով ներկայացվեր հանձնաժողովի քննարկմանը» [Кондаков, 1914, 276]:

Կայսերական հնագիտական հանձնաժողովը Ռուսաստանի հարավում տեղակայված պատմամշակութային հուշարձանները (դամբարանաբլուրներն ու դամբարանադաշտերը) մարդկանց կողմից գաղտնի իրականացվող գողությունից փրկելու համար 1891 թվականին հատուկ ուշադրություն դարձրեց մի քանի՝ հնագիտական առումով ավելի կարևոր նշանակություն ունեցող, հնագիտական տարածքների ուսումնասիրության և հետազոտության վրա: Հնագիտական պեղումներ իրականացվեցին Ելիզավետապոլի նահանգում:

Ելիզավետապոլի նահանգով անցնելով Կայսերական հնագիտական հանձնաժողովի նախագահը տեղեկացավ Դիլիջանի փոստային ճանապարհից ոչ հեռու գտնվող տարածքի պեղումներից հայտնաբերված հնագիտական արժեքավոր գտածոների մասին: Քանի որ Դիլիջանի լեռնանցքը (Ճեղքվածքը) իր հնագիտական արժեքայնությամբ արդեն հայտնի էր ոչ միայն ռուս, այլև օտար հնագետների ուսումնասիրություններից, ուստի կոմս Բոբրինսկին անձամբ ուսումնասիրելով այդ տարածքը, ավելորդ չհամարեց հետազոտել մի քանի դամբարանադաշտեր Ախստաֆա գետի ձախ ափին՝ «Մեծ-Չալ» (այսինքն՝ Մեծ Լեռ) կոչվող տարածքում: Կոմս Բոբրինսկին այդտեղ ուսումնասիրեց 12 դամբարանադաշտ [ОИАК за 1891 г., 1893, 117]: Ապա և 1894 թվականին Կայսերական հնագիտական հանձնաժողովի հանձնարարականով Շուշիի Ռեալական ուսումնարանի դասախոս Է. Ռյոսլերը շարունակեց պեղումները Շուշիի և Ջևանշիրի գավառներում:

1894 թվականին հետազոտվող թաղումների մոտակայքում, Շուշիից հարավ՝ Երևանյան փոստային ճանապարհի վերանորոգման ժամանակ, պատահական գտնվել են մարդկային ոսկորներ, որն էլ առիթ հանդիսացավ Է.Ա. Ռյոսլերի համար ուսումնասիրելու այդ տարածքը [Սարումյան, 2024, 55]:

Ըստ վկայությունների պեղումներն իրականացվեցին Խոջալու բնակատեղիի մոտ, որտեղ հետազոտության արդյունքում գտնվել են ուշ թաղումներ: Այսպես, նշվում է, որ «Խոջալու կայարանի մոտ մեկ քառակուսի վերստի¹² վրա հայտնաբերվել է 30 տարբեր տեսակի և չափսի դամբարանաբլուրներ՝ արևելքից մեծ քարաժայռերով, ինչպես նաև վերևում մեծ ավազանով, երբեմն մասամբ ծածկված քարերով, մեկ հողազանգվածից (ավելի մեծ և միջին չափի մեծության) բաղկացած, աղոտ ձևի հողային ցածր բլուրներ և միջին կամ փոքր չափի քարե բլուրներ՝ վերևում հարթ հարթակով» [ОИАК за 1894 г., 1896, 16]:

Այդ բլրատեղիներից սկսեց հետազոտվել, բայց ավարտին չհասցվեց զգալի քարձրություն ունեցող բլուրը, և հետազոտվեց 5 առավել ցածր քարձրության դամբարանաբլուրները: «Въ большомъ кургане внутри оказалась груда камней до 1 саж. вышины и до 8 саж. длины. Въ одномъ изъ малыхъ кургановъ на поверхности земли найдены остатки трупосожжения, и среди нихъ различныя вещи: мѣдный котель съ четырьмя ручками и круглымъ дномъ, обломки каменнаго сосуда съ изваянными головками барановъ на ручкахъ, части широкаго меднаго ножа съ изображеніями человека и животныхъ, сердоликовыя бусы, кости зубра, лошади, собаки и птичьи; предметы и кости прикрыты сверху остатками обожженнаго дерева. Въ большомъ каменномъ кургане оказалась огромная плитняковая гробница, не покрытая сверху; одинъ изъ угловъ гробницы занять тремя большими плитами, подъ которыми на незначительной глубине лежали остатки человѣческихъ костей, медныя наконечники стрель, такой-же наконечникъ копья, черепки каменной посуды и кости зубра. Расположенное близъ ст. Ходжалы кладбище съ каменными гробами, иногда прикрытыми сверху огромными камнями, оказалось беднымъ. Раскопки, произведенныя близъ Ходжалы внутри одного каменнаго „коша“, обнаружили позднейшее погребение, также въ каменной гробнице; костякъ лежалъ головою на З., лицомъ на Ю.» [Նույն տեղում, 17]:

Խոջալու կայանատեղիի մոտ հայտնաբերված գտածոները վերաբերվում են բրոնզե դարյան և վաղ երկաթե դարի ժամանակաշրջաններին:

Այնուհետև Է. Ռյոսլերը պեղումները շարունակել է Արջաձոր (Առաջաձոր) գյուղի մոտակայքում: Այդ տարածքում պեղվեց սև հողով և սալաքարերով շաղախված դամբարանաբլուր, որտեղ հայտնաբերվել են տարբեր կողմեր նայող երեք զուգահեռ տեղաբաշխված թաղումներ, բոլորը առանց քարարկղային դամբարանի: Դրանցից հատկապես մեկը հարուստ էր բրոնզե զինատեսակներով և նման այլ ապրանքներով: Հենց դրանում գտնվել են՝ «мечъ, кинжалы, каменные и бронзовыя стрелы, копье, удила, массивныя кольца, золотой цилиндръ съ изображеніемъ антилопы, ножи и орудіе въ виде виль. Въ числѣ другихъ предметовъ изъ Артчадзора любопытны: пряжка въ виде пластинки, инкрустированной перламутромъ и украшенной по угламъ четырьмя головками, пряжка въ виде кольца, также съ головкой, круглая бляха для ремней съ большой выпуклой известковой наставкой и рукоять

¹² Մեկ վերստը՝ 1067 մետր է:

съ головкой быка, инкрустированная деревомъ. Железныхъ вещей не найдено никакихъ. Почти все найденные предметы уже известны изъ прежнихъ раскопокъ въ Борчалинскомъ и другихъ уездахъ, но кажется, еще въ первый разъ найдены они въ кургане» [Նույն տեղում, 17-18]:

1894 թվականին շարունակվեցին պեղումները Դամդոլու(Գայլաթաղ-Կյուլաթաղ) գյուղի մոտակայքում, «насыпанныхъ также изъ земли съ булыжникомъ, въ которыхъ оказались каменные гробницы со скелетами, лежащими въ направлении отъ З. къ В., при нихъ вещи той-же культуры» [Նույն տեղում, 18]:

Առաջածորից 8 վերստ հեռավորության վրա գտնվող Սրխավենդ գյուղատեղիում պեղվեց հետաքրիիր մի դամբարանաբլուր՝ Խոջալու բնակատեղիի մոտակայքի դամբարանաբլուրների նմանատիպը: «Курганная насыпь, высотой более 4 саж., сложена была изъ одного песку и имела правильную конусовидную форму. На поверхности земли лежала куча различныхъ костей и вещей, прикрытая сверху слоемъ дерева; въ ней, кроме истлевшихъ костей человека, оказались кости зубра, лошади, собаки, много красивыхъ черныхъ урнъ съ пепломъ и следующие бронзовые вещи: наконечники стрелъ, длинные тупые наконечники различныхъ формъ въ виде рукоятей, массивныя круглыя инкрустированныя бляхи, ножъ, вилообразное орудие и пр.» [Նույն տեղում, 18-19]:

Ավարտելով Շուշիից հարավ ընկած տարածքի պեղումները, Է. Ա. Ռյոսլերը աշխատանքները տեղափոխեց Խոջալու, որտեղ պետք է հետազոտեր երկու հսկայական դամբարանադաշտեր, որտեղ պեղումները, ինչպես հայտնի է, սկսվել էին դեռևս 1894 թվականին և շարունակվել 1895 թ. [ОИАК за 1894г., 1896, 17; ОИАК за 1895 г., 1897, 50]:

Պեղումները Արցախ-Ղարաբաղում շարունակվել են հաջորդ տարիներին ևս: Ուշադրության արժանի են նաև 1895-1897 թթ. պեղումները: 1895 թ. և 1897 թ. (որոշ մասը) պեղումներին և արդյունքներին անդրադարձել ենք «Բանբերի» 2024 թ. 1-ին համարում:

Է.Ա. Ռյոսլերը 1895 թ. շարունակելով Շուշիի գավառակի մեծ բլուրների հետազոտությունը, կազմել է մանրամասն հաշվետվություն Խոջալու կայանատեղիի շրջակայքում, Խոջալու (Խոջալինկա՝ ըստ հաշվետվության տվյալների) գետի աջ ափին իրականացրած պեղումների մասին, և սկսել էր Կարկառ գետի (Կարկառ-չայ՝ ըստ հաշվետվության տվյալների) աջ ափի՝ փոստային ճանապարհից արևելք գտնվող մի քանի բլուրների հետազոտությունը [ОИАК за 1895 г., 1897, 49]:

1895 թ. իրականացվող պեղումների արդյունքում հայտնաբերվել էին բրոնզից պատրաստված տարբեր գտածոներ:

Վերոհիշյալ հաշվետվության մեջ նշվում է, որ Կարկառ գետի (ըստ հաշվետվության տվյալների) ձախ ափին, Խոջալու կայանատեղիից դեպի արևելք, հետազոտվել է 6 թաղում, որից երեքը՝ քարից էին՝ ունեին 6-12 ոտնաչափ բարձրություն և պարփակված էին քարե տուփերով [ОИАК за 1895 г., 1897, 50]:

Ապա և նշվում է, որ բուն Շուշիի մոտ Է.Ա. Ռյոսլերը պեղել է անհայտ ժամանակաշրջանի ինչ-որ գերեզմանոցի հատված, որի մեջ հայտնաբերվել են «прикрытые плитами, но совершенно пустые каменные ящики, расположенные въ направлении съ З. на В.» [ОИАК за 1895 г., 1897, 51; Սարումյան, 2024, թիվ 1, 52]: (Այս բոլոր պեղումների հաշվետվությունը և նրանց հետ կապված նկարները Է.Ա. Ռյոսլերի կողմից տեղակայված են

Բեռլինի մարդաբանության, էթնոլոգիայի և նախնադարի պատմության Ընկերության 1895-1896 թթ. ամսագրերում):

Բացի դրանից Է.Ա. Ռյոսլերը Ջաբրայիլի գավառակում Ակնաղբյուր (ըստ հաշվետվության՝ Կարաբուլախ) գյուղի մոտ հետազոտել է հսկայական Կարա-Քյոփագ դամբարանաբլուրը: Բլուրի արտաքին հետազոտությունը և փորձնական պեղումները ցույց են տվել, որ «նրա բարձունքում գտնվում են ինչ-որ բարակ, քառակուսի աղյուսներից պատրաստված շինության մնացորդներ, որում, ի դեպ, հայտնաբերվել են պահոցի հետքեր և 2 կմախք: Վերևի հարթակից ջրի խողովակ էր իջել: Մոտակայքում կան ավելի փոքր չափերի, բայց նաև հսկայական թմբեր» [ОИАК за 1895 г., 1897, 51; Սարումյան, 2024, թիվ 1, 52]: Կարաբուլախ (Ակնաղբյուր) գյուղի մոտակայքում Է.Ա. Ռյոսլերը բացել է կարասային թաղումներով դամբարան, որտեղ հետազոտման արդյունքում գտնվել են երկաթե դաշույնի կտորներ և փոքրիկ կապույտ ուլունք, իսկ «близъ Ванкского монастыря позднеейшее, вероятно, христианское кладбище, въ которомъ костяки головою на З., въ каменныхъ ящикахъ и безъ вещей» [Նույն տեղում]: (Այս ամենի մասին տես՝ Приложение 8-е. ОИАК за 1895г., изд. 1897, 158–159):

Փաստորեն, Ակնաղբյուր (ըստ հաշվետվության՝ Կարաբուլախ) գյուղի մոտ հայտնաբերված գտածոները պատկանում են երկաթի դարաշրջանին, իսկ Վանք գյուղի եկեղեցու տարածքի գտածոները՝ վաղ քրիստոնեական ժամանակաշրջանին:

Ելիզավետապոլի նահանգի Շուշիի գավառակում իրականացրած պեղումների արդյունքների հաշվետվության մեջ ևս Է.Ա. Ռյոսլերը արժեքավոր վկայություններ է տալիս Հաղրութ-Վանք գյուղերի միջև ընկած տարածքի վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի պատկանելիության վերաբերյալ [ОИАК за 1895г., 1897, 201]: «Երկու լեռնաշղթաների միջև ընկած խոր հովտում, դեպի Արաքսից հարավ-արևելք իջնող ցածրադիր գոտում է գտնվում Հաղրութ գյուղը: Նրա շրջակայքում դամբարանաբլուրներ չեն երևում, սակայն Հաղրութի և Վանքի գլխավոր կենտրոնակայանի (штабъ-квартира) (ասես ներկայացնելով Վանք գյուղի շարունակությունը և իր անունը ստանալով մոտակայքում գտնվող Վանք կոչվող վանքից), միջև գտնվում է հին գերեզմանոց 155 ոտնաչափ երկարությամբ և 85 ոտնաչափ լայնությամբ», որը Է.Ա. Ռյոսլերի կարծիքով վերաբերում է վաղ քրիստոնեական ժամանակաշրջանին: Այնուհետև Է.Ա. Ռյոսլերը իր տեսակետը հաստատում է կոնկրետ հետազոտման արդյունքներով [ОИАК за 1895 г., 1897, 158]:

1896 թ. շարունակվեցին Է. Ռյոսլերի կողմից իրականացվող պեղումները Ելիզավետապոլի նահանգում: Նշվող ժամանակահատվածում հետազոտություններն ի կատար ածվեցին Գյուլափիլու գյուղատեղիի մոտակայքում գտնվող դամբարանաբլուրներում [ОИАК за 1896г., 1898, 106]:

Կայսերական հնագիտական հանձնաժողովի անդամ, Շուշիի Ռեալական ուսումնարանի դասախոս Է.Ա. Ռյոսլերը 1897 թ. պարբերաբար շարունակել է հնագիտական հետազոտությունները, հաշվետու տարում կենտրոնանալով հիմնականում Շուշիի գավառակի վրա, որը իր ավելի վաղ սկսած աշխատանքների շարունակություն էր: Այսպես, նրա կողմից հետազոտվեց Խոջալու գյուղի մերձակայքում գտնվող ամբարտակը,

որի պեղումները սկսել էր դեռևս 1894 թվականին [ОИАК за 1894 г., 1896, 17; ОИАК за 1895 г., 1897; Սարումյան, 2024, 54]:

Ներկայացվող տեղեկագրի կարևոր բաժիններից է նաև «Приложения»-ն, որտեղ նկարագրվում են պեղումների արդյունքնում ձեռք բերված գտածոները: Այսպես, «Приложения»-ի 5-րդ կետում շարադրվում է Ելիզավետապոլի նահանգի Շուշիի գավառակում (уезде) իրականացրած պեղումների ժամանակ հայտնաբերված գտածոների մասին:

1896 թ. Է.Ա. Ռյոսլերը սկսեց ուսումնասիրել Գյուլափիլու բնակավայրի մոտ գտնվող մի քանի հին դամբարանադաշտեր, որոնք տեղակայված էին Շուշիից դեպի հարավ-արևելք ընկած Ղարաբաղի տափաստան իջնող երկու լեռնաշղթաների միջև ընկած ձորում: Այս գյուղի մոտակայքում Է.Ա. Ռյոսլերը հանդիպեց եռակի հուղարկավորության (թաղումների)՝ «1) քարարկղային գերեզմանների, 2) առանց արկղերի գրունտային գերեզմանների, որոնք դրսից նշված են քարերից պատրաստված պսակներով, և 3) դամբարանների» [ОИАК за 1896 г., 1898, 106]:

Այնուհետև Է.Ա. Ռյոսլերը սկսեց պեղել Շուշից 2 ½ մղոն հարավ-արևմուտք ընկած, Երևանյան մայրուղու մոտակայքում գտնվող «Իգա» («Ярма») բլուրը [ОИАК за 1896 г., 1898, 109]:

1896 թ. Է.Ա. Ռյոսլերի կողմից հայտնաբերված գտածոները պատկանում էին բրոնզի և երկաթի դարաշրջաններին: Այդ մասին վկայում են տեղեկագրում գրանցված պեղումների արդյունքներում հայտնաբերված գտածոների մասին նկարագրությունների վկայությունները՝ «Три бронзовые обруча, 6 браслетов, 2 бляшки, крючекъ и 2 кольца изъ того-же металла, железный ножъ и железный наконечникъ копья, собранные преподавателемъ Шущинскаго реального училища Э. Реслеромъ въ м. Джебраиле, въ уезде того-же имени» [ОИАК за 1896г., 1898, 116]:

Նույն Շուշիի գավառակի Չանախչի գյուղում, որը տեղակայված էր Շուշիից 18 վերստ հարավ-արևելք, Է.Ա. Ռյոսլերը 1897 թ. ուսումնասիրել է հին գերեզմանատուն գյուղի հարավային մասում և հետագոտել է այդտեղ 2 գերեզման, որը տեղի բնակչության մոտ հայտնի էր «իշխանական» անունով [ОИАК за 1897 г., 1900, 155]:

Փաստորեն, Կայսերական հնագիտական հանձնաժողովի կողմից Արցախ-Ղարաբաղի տարածքում իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոները վերաբերվում են բրոնզեդարյան և վաղ երկաթի դարաշրջանին, ինչպես նաև վաղ քրիստոնեական ժամանակահատվածին, ուստի և, պետք է ընդգծել, որ պեղումների արդյունքները արժեքավոր վկայություններ են տարածաշրջանի պատմամշակութային ժառանգության մասին:

Պետք է ընդգծել, որ բրոնզի և երկաթի դարաշրջաններին վերաբերող դամբարանների, բնակատեղիների (Ստեփանակերտ, Խոջալու, Ամարաս, Մատաղիս, Խաչենագետի, Իշխանագետի հովիտներ) պեղումները հավաստում են, որ այս տարածքը պատկանում է Բ.ա. 5-3-րդ հազարամյակներում ձևավորված Կուր-Արաքսյան մշակութային շերտին: Առավել կարևոր են Բ.ա. 3-րդ հազարամյակով թվագրվող Վարարակնի (Խանքենդի,

Ստեփանակերտ) և Խաչենագետի հովտի եզակի դամբարանաբլուրները, որոնք հնդեվրոպացիների հնագույն գործունեության առաջին վկայություններից են:

Այսօր հանրության համար ազգային հնությունները, ազգային հիշողությունը մոռացության տրվելու վտանգի առջև են հայտնվել:

Այսօր չեն դադարել Ադրբեջանի կողմից ոտնձգությունները և բարբարոսական գործողությունները հայոց հոգևոր և մշակութային ժառանգության հանդեպ:

Այսօր մենք ականատես ենք լինում, որ ոչնչացվում, բռնադատվում, վանդալիզմի են ենթարկվում Արցախ-Ղարաբաղի տարածաշրջանում տեղակայված բոլոր պատմամշակութային կոթողները:

Ուստի, սույն հոդվածով յուրովի փորձ է կատարվում հակադարձելու ադրբեջանական իշխանությունների կողմից Արցախ-Ղարաբաղի պատմական ժառանգության, և ընդհանրապես, հայոց պատմության խեղաթյուրումներին:

Անհրաժեշտ է դիմել միջազգային հանրությանն ու պատկան կառույցներին հստակ գնահատական տալ պատմամշակութային հուշարձանների նկատմամբ իրականացվող հանցագործությանը, ինչպես նաև գործնական քայլեր ձեռնարկել հետագա վերացումից փրկելու Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգևոր-մշակութային պատմական ժառանգությունը:

Վերջաբանի փոխարեն

Այսպիսով՝

1.«Կայսերական հնագիտական հանձնաժողովի հաշվետվություն»-ները կարևոր սկզբնաղբյուր են հանդիսանում Արցախ-Ղարաբաղի պատմամշակութային ժառանգության մասին տեղեկությունները բացահայտելու համար:

2. 1894-1897 թթ. պեղումների արդյունքներն ընդգրկող ներկայացված Հաշվետվությունների հիման վրա վեր են հանվում Մեծ Հայքի 10-րդ նահանգ Արցախ-Ղարաբաղի բնիկ հայկական տարածք լինելու հանգամանքը, նրա հին և միջնադարյան պատմության հարուստ բովանդակությունը:

3. 19-րդ դարի վերջին քառորդում Կայսերական հնագիտական հանձնաժողովի կողմից Արցախ-Ղարաբաղում իրականացրած պեղումների արդյունքները արժեքավոր վկայություններ են տարածաշրջանի պատմամշակութային ժառանգության պատմության մասին:

4. Դրանք իրենց հերթին լուր վկայություններն են Արցախ-Ղարաբաղի հնագույն ժամանակաշրջանում բնակեցվածության և տարածքի վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի պատկանելության վերաբերյալ:

5. Հնագիտական հանձնաժողովի կողմից ստեղծված արխիվային ֆոնդերը անգնահատելի աղբյուր են հանդիսանում աղբյուրագիտական հետազոտությամբ պարզելու Արցախ-Ղարաբաղի հնագույն հայկական պետության և մշակույթի հնագույն հուշարձանները:

6. Այսօր, երբ արցախահայության բռնի տեղահանության հետևանքով շուրջ 120.000 արցախցիներ օտարվել են իրենց սոցիալ-մշակութային արժեքներից, և վտանգված է նրանց սոցիալ-մշակութային և ազգային ինքնությունը, այսօր, երբ ադրբեջանական իշխանությունները փորձում են հայ ժողովրդի հիշողությունից ջնջել հայրենի պատմությունը, խեղաթյուրել և բռնադատագնել ազգային արժեքները, գրկել Արցախ աշխարհը իր պատմական ինքնությունից, հայկականության որևէ վկայությունից շատ կարևոր է Ադրբեջանի կողմից իրականացվող մշակութային եղեռնը դատապարտել՝ համայն մարդկության կողմից:

Արխիվների, գրադարանների ֆոնդերում պահպանվող հնագիտական և ազգագրական նյութերի ուսումնասիրությունն ու ամբողջացումը հանրության առաջնային խնդիրը պետք է դառնա, որովհետև դրանք իրենց պարունակությամբ՝ անգնահատելի աղբյուր են հանդիսանում բոլորի համար:

SUMMARY

The article examines the evidence about Artsakh-Karabakh presented in the bulletins “Reports of the Imperial Archaeological Commission” (“report of the Imperial Archaeological Commission”), one of the many valuable sources stored in the National Library of Armenia. These newsletters were published between 1862 and 1918 once a year, summarizing events from 1859 to 1913-15. the data of the conducted archaeological excavations. 45 volumes of books have been published.

In the current difficult geopolitical conditions, the assessment and preservation of national antiquities require special and careful treatment, and their study and reinterpretation in a new way become even more important.

Today, in the context of the Armenian territorial losses, we are faced with the loss of national antiquities, national memory.

Therefore, in this article we make a unique attempt to identify and present to the public the Imperial Archaeological Commission in Artsakh-Karabakh of the 19th and 20th centuries some of the results of the archaeological excavations carried out, along with their original contents (this article is presented as an addition to the materials published in the previous issue of the Bulletin for 2024/1).

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարումյան Ն., Վկայություններ Արցախ-Ղարաբաղի մասին ըստ «Կայսերական հնագիտական հանձնաժողովի հաշվետվություն» («Отчетъ Императорской Археологической Комиссии») տեղեկագրերի // Բանբեր Հայաստանի գրադարանի: Գիտամեթոդական հանդես., Երևան, «Գիրք» հրատ., 2024, թիվ 1, էջ 51-61:
2. Кондаков С.Н. Императорская археологическая комиссия
3. миссия // Юбилейный справочник Императорской Академии Художеств. 1764-1914 = Юбилейный справочникъ Императорской Академии Художествъ. 1764-1914, С.-Петербург, Товарищество Р. Голике и А. Вильборг., 1914, Т. I, 353 с.
4. Отчетъ Императорской археологической комиссии за 1891 годъ. съ 200 политипажей, Санкт-Петербургъ, Типография Главного Управления Уделовъ, Моховая, № 40, 1893, 187 с.

5. Отчетъ Императорской археологической комиссии за 1894 годъ. съ 235 политипажами въ тексте – Санкт-Петербургъ: Типография Главного Управления Уделовъ. Моховая, № 40, 1896, 171 с.
6. Отчетъ Императорской археологической комиссии за 1895 годъ. съ 394 политипажами въ тексте – Санкт-Петербургъ: Типография Главного Управления Уделовъ. Моховая, № 40, 1897, 202 с.
7. Отчетъ Императорской археологической комиссии за 1896 годъ. съ 626 политипажами въ тексте – Санкт-Петербургъ: Типография Главного Управления Уделовъ. Моховая, № 40, 1898, 252 с.
8. Отчетъ Императорской археологической комиссии за 1897 годъ. съ 321 политипажами въ тексте – Санкт-Петербургъ: Типография Главного Управления Уделовъ. Моховая, № 40, 1900, 192 с.

**ՔՐԻՍՏՈՖԵԼ ՎԱՆ ՋԻԽԵՄ ՓՈՐԱԳՐԻԶ-ՆԿԱՐԶԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ**

Բանալի բառեր՝ փորագրապատկեր, տպագրություն, փորագրիչ, գրքի նկարագրադրում, Քրիստոֆել վան Ջիխեմ, Թովմա Վանանդեցի:

Keywords: wood engraving, printing, engraver, book illustration, Christofel van Sichem, Tovma Vanandetsi.

Արևմտյան Եվրոպայի հայկական տպագրական կենտրոններից առանձնապես ուշագրավ է Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամիւր դերը, որտեղ հայերեն գրքերի տպագրությունը սկսվելով 1660 թ., առժամանակյա դարարից հետո շարունակվում է մինչև 1716 թ., ամբողջ 57 տարի, և ապա վերջանում ընդմիջո:

Ամստերդամի տպարանի պատմության մեջ իր հրատարակչական գործունեությամբ առանձնանում է Գողթն գավառի Սբ. Խաչ վանքի եպիսկոպոս Թովմա Վանանդեցի Նուրիջանյանը [Սևակ, 1960, 412-415]: Շուրջ տասը տարվա (1695-1705 թթ.) ընթացքում Վանանդեցիները հրատարակում են 20 գիրք և «Համատարած աշխարհացոյց» կոչվող պղնձափորագիր քարտեզը: Իրենց տպագրական որակով Վանանդեցիների հրատարակությունները գերազանցում են մինչ այդ եղած բոլոր հայկական, անգամ՝ Ոսկանյան տպարանի հրատարակություններին: Վանանդեցիների հրատարակությունները աչքի են ընկնում շքեղ պատկերազարդմամբ, որի բաղկացուցիչ մաս են կազմում փորագիր պատկերները: Վերջիններիս հրատարակություններում հիմնականում տեղ են գտել ծագումով գերմանացի փորագրիչ Քրիստոֆել վան Ջիխեմի պատրաստած փորագրանկարները:

Եվրոպայում փորագրանկարչությունը շատ արագ մեծ ժողովրդականություն ստացավ: ԺԵ-ԺԶ. դարերի գերմանացի Հյուսիսային Վերածննդի մեծագույն նկարիչ Ալբրեխտ Դյուրերը (1471-1523 թթ.) կատարեց 374 փայտե փորագրանկար, որոնցից հայտնի են «Հայտնություն» (Ապոկալիպսիս) (15 թերթ), «Մարիամի կյանքը» (20 թերթ), «Մեծ չարչարանքներ» (12 թերթ), «Փոքր չարչարանքներ» (36 թերթ) շարքերը: 1496-1498 թթ. Դյուրերը ստեղծում է իր հայտնի՝ «Ապոկալիպսիս» (Հայտնություն) փայտափորագիր պատկերների շարքը: Այն բաղկացած է 15 փորագիր պատկերներից [Huntington, 1855, 306]: Հայտնությունը Նոր Կտակարանի կանոնի գրքերից վերջինն է: Ըստ Էրվին Պանառովսկու՝ Լեոնարդո դա Վինչիի «Վերջին ընթրիքին» համարժեք Դյուրերը ստեղծեց նման արժեքավոր ստեղծագործություն՝ «Ապոկալիպսիսը»: Դյուրերի այս աշխատանքը կրկնօրինակեցին ոչ միայն Գերմանիայում, Իտալիայում, այլ նաև Ֆրանսիայում, Ռուսաստանում և ոչ միայն

փորագրանկարների տեսքով, այլ նաև քանդակագործության, գեղանկարչության մեջ, որոնք իրենց ցայտուն արտացոլումը գտան նաև հայ գրքարվեստում:

Հայկական վաղ տպագիր գրքերում, այդ թվում նաև Վանանդեցիների հրատարակություններում, Դյուրերի որոշ աշխատանքներ հայտնվում են վերը նշված Քրիստոֆել վան Զիխեմի կատարած փորագրանկարներով: Քրիստոֆել վան Զիխեմի փորագրանկարները արված են նաև այլ հեղինակների գործերից (Abraham Bloemaert, Hendrick Goltzius, Lukas van Leyden, Maarten van Heemskerck): Նշենք, որ Ամստերդամյան հրատարակությունների փորագրանկարները կամ դրանց մեծ մասը ձեռք է բերել Մատթեոս Ծարեցին, քանի որ այդ պատկերները կան Ծարեցու հրատարակած Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» (1660-1661 թթ.) գրքում և «Շարակնոցում» (1664-1665 թթ.): Օտար հեղինակներից միայն Լեհման Հելմուտ Հաուպտը և Ջորջո Միլեսն են, որ նշում են վերը նշված փաստի մասին:

Թովմա Վանանդեցին իր հրատարակություններում հիմնականում օգտագործել է հենց այդ փորագիր պատկերները: Քրիստոֆել վան Զիխեմ կրտսերը ծնվել է 1581 թ. Բազելում, մահացել 1658 թ. Ամստերդամում: Ծագումով գերմանացի է: 1600-ական թվականներին նա ապրել է Ամստերդամում: Եղել է հոլանդացի հռչակավոր նկարիչ Հեն(դ)րիկ Գոլցիուսի (1558-1617 թթ.) աշակերտը [Wijnman, 233-244]: 1602-1606 թթ. աշխատել է Լեյդենում, իսկ 1606-1658 թթ. Ամստերդամում [Lehmann-Haupt, 252]: 1603 թ. Գոլցիուսի հետ միասին ճամփորդել է Լեյդեն, ծանոթացել տեղի փորագրիչ վարպետների աշխատանքներին: Հենդրիկ Գոլցիուսը 1596 թ. Վենետիկում սովորում է գրաֆիկա Տիցիանի դպրոցում: Նրա արվեստում ցայտուն կերպով արտահայտված է Տիցիանի արվեստի ազդեցությունը, հատկապես չորս ավետարանիչների պատկերներում (1593 թ. պահվում է Ռոտերդամի Boymans van Beuningen թանգարանում), որից էլ հետագայում ոգեշնչվել է Քրիստոֆել վան Զիխեմը [Reznicek, 1961, 215]: Քրիստոֆել վան Զիխեմը կամ «հոլանդացի Դյուրերը» հայտնի է եղել որպես գրքեր նկարազարդող (ունի շուրջ 1200 փայտե փորագրություն): Ունի մի շարք ինքնուրույն գործեր, որոնցից լավագույնները գտնվում են դիմանկարների այն ժողովածուի մեջ, որը լույս է տեսել Ամստերդամում 1609 թ. (Iconica Haeresiarcharum): Նրա նկարազարդմամբ է լույս տեսել «Քրիստոսի մանկությունը»՝ կատարված 1617 թ., ինչպես նաև Աստվածաշնչի մի քանի հրատարակություններ, որոնցից երկուսը հրատարակվել են Ամստերդամում (1646 թ., 1648 թ.) [Bryan, 1899, 398], Նոր Կտակարան՝ տպված Անտվերպենում (1646 թ.): Քրիստոֆել վան Զիխեմ կրտսերի այլ գործերի շարքում հայտնի են չորս ավետարանիչների դիմանկարները, որոնք օգտագործվել են Թովմա Վանանդեցու հրատարակություններում և Ոսկան Երևանցու Աստվածաշնչում (1666-1668 թթ.): 1657 թ. հրատարակված Biblia Sacra-ն ունեցել է 797 պատկեր՝ տպված Քրիստոֆել վան Զիխեմի փորագրություններից: Վերջին երկու այս հրատարակություններում Զիխեմը օգտագործել է Ալբրեխտ Դյուրերի, Լուկաս վան Լեյդենի, Հենդրիկ Գոլցիուսի, Հանս Հոլբեյնի, Մարտին վան Հեմսկերկի կրկնօրինակումները: Վերջիններս իրենց նկարչական գործունեությունը սկսել են որպես գեղանկարիչներ և հայտնի են եղել որպես ակադեմիական նկարչության հմուտ վար-

պետներ: Քրիստոֆել վան Զիխեմը համարվում է ԺԷ. դարի Էզրայի գրքի նկարագրողումների լավագույն վարպետը: Վերջին երկու հրատարակությունները հրատարակվել են Պիտեր Յակոբս Պատսի տպարանում:



Նկ. 1.1, 1.2 Արարչագործություն, ՄՄ Հմր 349 Աստվածաշունչ

Հարկ է նշել նաև, որ առաջին անգամ հայկական գրքերի համար Քրիստոֆել վան Զիխեմի փորագրանկարները օգտագործվել են 1660-1661 թթ. Ամստերդամի «Սբ. Սարգիս և Սբ. Էջմիածին» տպարանի կողմից հրատարակած գրքերում, իսկ վերջին անգամ հանդիպում ենք 1739 թ. Կոստանդնուպոլսի Մարտիրոս Մարգարյանի տպարանի հրատարակություններում: Ըստ Ռաֆայել Իշխանյանի՝ Ոսկանյան տպարանի հրատարակությունների մեջ օգտագործված գրեթե բոլոր նկարները (փոքր բացառությամբ) Քրիստոֆել վան Զիխեմ կրտսերի փորագրություններն են: Հետագայում այս բոլոր կրկնօրինակումները Զիխեմը հրատարակել է մեկ ընդհանուր գրքում՝ Der zielen Lust-Hof խորագրով: Վան Զիխեմի փորագրապատկերների մի մասը անմիջական կրկնօրինակներ են նաև Ջերոմ Նադալի (1507-1580 թթ.) Պատկերագրող Ավետարանից [Ենոքյան, 2016, 79]: Ջերոմ Նադալի կազմած Պատկերագրող Ավետարանը՝ կատարված Հիսուսական ուխտի հիմնադիր Լոյս Իգնատիոսի պատվերով, ԺԶ. դարի նշանավոր տպագիր գրքերից է: Այն տպագրվել է 1593-94 թթ. Անտվերպենում, Մարտին Նունթիոսի տպարանում [Moffitt, 1990, 631-638]: Ավետարանի ամբողջական վերնագիրն է Evangelicae historiae imagines adnotationes et meditationes [Bangert; Mccoog, 1992, 25-35]: Գրքում օգտագործված է 153 փորագիր պատկեր, հիմնականում կատարված հոլանդացի հայտնի փորագրիչներ Հերոնիմուս և Յոհաննես Վիրերիքս եղբայրների, իսկ մյուս մասն էլ իտալացի գեղանկարիչ

Բեռնարդինո Պերսեի կողմից [Buser, 1976, 424-425]: Փորագրապատկերները արտացոլում են Քրիստոսի կյանքը: Ջ. Նադալի Պատկերագրող Ավետարանը ոճական և հորինվածքային առումով հսկայական ազդեցություն ունեցավ հետագա տպագիր հոգևոր գրքի պատկերագրական համակարգի ձևավորման վրա, այդ թվում նաև Քրիստոֆել վան Ջիխեն կրտսերի: Տպագիր գրքերի փորագրապատկերների հիմքը դրվում էր ժամանակի եվրոպական գեղանկարչական և գծանկարչական բարձր վարպետությամբ ստեղծված հիմքերի վրա [Էնոքյան, 2016, 79]:



Նկ. 2.1. Հակոբի երազը Բեթելում,
Աստվածաշունչ 1666-1668 թթ.



Նկ. 2.2. Հակոբի երազը Բեթելում,
ՄՄ Հմր 204 Աստվածաշունչ

Ըստ Թիմ Բեքերի՝ ԺԶ-ԺԷ. դարերում եղել են չորս Քրիստոֆել վան Ջիխեն անունով նկարիչներ՝ Քրիստոֆել վան Ջիխեն երեց, Քրիստոֆել վան Ջիխեն, Կոռնելիոս վան Ջիխեն և Կառլ վան Ջիխեն: Նրանցից յուրաքանչյուրը իր գործունեությունը սկսել է քսաներկու տարեկանում: Տեսակետ կա, ըստ որի այս վերջին երկուսը միևնույն անձնավորությունն է, որը փորագրություններ է կատարել ոչ թե փայտի, այլ պղնձի վրա: Քրիստոֆել վան Ջիխեն երեցը ապրել ԺԶ. դարում Գերմանիայում և ոչ մի առնչություն չունի Ամստերդամի տպարանի փորագրանկարների հետ: Կա ենթադրություն, որ Քրիստոֆել վան Ջիխեն երեցը հայրն է ԺԷ. դարում ապրած մյուս վան Ջիխեն նկարիչների: Ուշագրավ է, որ մի շարք նկարիչների անվանատառերը Քրիստոֆել վան Ջիխենը թողել է նրանց պատկերներից արած փորագրանկարների վրա՝ AD-Ալբրեխտ Դյուրեր, HG-Հեն(դ)րիկ Գոլցիուս, և միաժամանակ դնելով իր ստորագրությունը՝ CVS [Պողոսեան, 4-5]: Հարկ ենք համարում նշել նաև, որ Քրիստոֆել վան Ջիխենը, բացի վերը նշված վարպետներից, կրկնօրինակումներ է կատարել նաև ԺԶ-ԺԷ դարերի ֆլամանդացի հայտնի փորագրիչներ՝ Յոհան Չադելերի (Joan I Sadeler, 1572-1620), Կրիսպյին վան դը Փաս երկրորդի (Crispijn

de Passe, 1564-1637), Հանս Բոլ (Hans Bol, 1534-1593), Մարտին դը Ֆոսի (Marten de Vos, 1532-1603), Հյուգո Վան դը Գոսի (Hugo van der Goes 1430 (1440)-1482) ստեղծագործություններից: Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրանկարները գեղեղվել են նաև Մարսելի, Լիվոռնոյի, Կոստանդնուպոլսի հայկական տպարանների հրատարակած գրքերում: Քրիստոֆել վան Ջիխեմի կատարած փորագրանկարներն արված են երկայնակի քսիլոգրաֆիայի տեխնիկայով [Քիրտեան, 1393, 18-20]: Նա փորագրության արվեստը ժառանգել էր իր հորից՝ Կարել վան Ջիխեմից՝ մասնագիտական գրականության մեջ Քրիստոֆել վան Ջիխեմ Ավագ անունով [Haupt, 1977, 39]: Քրիստոֆել վան Ջիխեմը, լինելով հմուտ փորագրիչ, կարողացել է վարպետորեն և մաքուր փորագրել իր ժամանակի նշանավոր նկարիչների աշխատանքները: Անտարակույս, սխալ է Հարություն Քյուրտյանի խիստ քննադատական խոսքը, այն մասին, թե Ջիխեմը աննշան փորագրիչ է և գուրկ է գեղարվեստական ըմբռնումից [Քիրտեան, 1966, 105-111]: Ջիխեմ կրտսերը, ի տարբերություն իր հոր, չորդեգրեց նրանից կոթողայնության արվեստը, սակայն իր պատկերների բարձր վարպետության և նրբագեղության շնորհիվ գերազանցեց անգամ իր հորը: «Ես եղել եմ ամենատաղանդավորը մեր ընտանիքի համանուն չորս նկարիչներից, որոնք ևս մեծ ներդրում են ունեցել ԺԷ. դարի հոլանդական փորագրության մեջ» - ասել է Քրիստոֆել վան Ջիխեմ կրտսերը [Reznicek, 1961, 215-278]: Նա փայտը կտրում էր առանց խաչահատումների, և իր հատումների մեջ գերիշխում էին թեք գծերը, որն էլ հենց նրա առավելությունն էր: Ջիխեմի անվան հետ է կապված նաև 1617 թ. հրատարակած Kindsheyd onses Heeren Jesu Christ գիրքը՝ բաղկացած Քրիստոսի մանկությունը պատկերող տեսարաններից: Հարկ ենք հա՛ մարում թվարկել այն հրատարակությունների անունները, որտեղ արտացոլվել են Քրիստոֆել վան Ջիխեմի ստեղծագործությունները.

- Boethius, Van de vertroosting der wysheid, 1616 թ., Ամստերդամ,
- Թովմա Գեմբացի, Յաղագս Համահետևման Քրիստոսի, 1624 թ. Անտվերպեն,
- Քրիստոսի մանկությունը, 1617 թ. Ամստերդամ, 1628 թ., Լուվեյն,
- Bibels Tressor ofte zielen Lust-Hof, 1629 թ., Լուվեյն,
- Historien ende prophetien der Hl. Schrifturen, 1645 թ. Ամստերդամ,
- Augustinus, Vierige meditation ofte aandachten, 1645 թ. Անտվերպեն,
- Bibels Tressor ofte zielen Lust-Hof, 1648 թ., Ամստերդամ,
- Biblia Sacra, 1646 թ., Անտվերպեն և 1657 թ. Ամստերդամ:

Հետագայում 1646 թ. հրատարակած Սրբազան Ավետարանը կամ Biblia Sacra-ն վերահրատարակվում է 1739 թ. Ռոտերդամում և 1743 թ. Ամստերդամում Bibelshe prenten և Bibels Lust-Hof անվանումներով: Քրիստոֆել վան Ջիխեմի փորագրանկարների արդեն պատրաստի տպաձևերը Թովմա Վանանդեյին օգտագործել է իր հրատարակություններում՝ հարմարեցնելով դրանք իր գրքերի բովանդակությանը: Մեզ հայտնի չէ, թե սկզբնապես ում կամ որ գրքերի համար են արվել Ջիխեմի փորագրանկարները: Ինչպես նշում է Հարություն Քյուրտյանը, հոլանդացի փորագրանկարիչը լատիներենով՝ A, B, C, D և այսպես շարունակ հաջորդաբար համարակալել է պատկերները և գրքի վերջում ըստ համարների հերթականության դրել նրանց մակագրությունները: Քանի որ գրքի վերջում հայերենը նման մակագրություններ չունի, ուստի տառերն անիմաստ են դառնում: Չենք

բացառում նաև այն փաստը, որ Քրիստոֆել վան Զիխենը ծանոթ է եղել նաև ֆրանկ-ֆլամանդացի փորագրիչ, ոսկերիչ Թեոդոր դե Բրայի (1561-1623 թթ.) լատիներեն Աստվածաշնչի փորագրապատկերներին: Աստվածաշունչը հրատարակվել է 1609 թ. Գերմանիայի Մայնց քաղաքում: Այս ամենից ելնելով կարող ենք ասել, որ հայ տպագիր գրքերի նկարագարդման արվեստը ձևավորվում էր ժամանակի գեղանկարչական բարձր վարպետությամբ ստեղծված հիմքերի վրա, իսկ Ոսկան Երևանցու և Թովմա Վանանդեցու հրատարակությունները դառնում են եվրոպական գեղանկարչական ազդեցությունները տարածող հիմնական աղբյուր: Այն գեղարվեստական մեծ ազդեցություն է ունենում ոչ միայն հայ տպագիր գրքի ձևավորման, այլ նաև ուշ շրջանի հայ միջնադարյան մանրանկարչության՝ հատկապես Աստվածաշնչերի պատկերագարդման վրա: Ոսկանյան և Վանանդեցիների հրատարակությունները նոր որակ և կարևոր խթան հանդիսացան ԺԷ-ԺԸ դարերի հայ գրքարվեստի՝ գեղարվեստական նոր ձևերի մշակման, ձևավորման և զարգացման համար:



**Նկ. 3. Մհարոնի և իր որդիների օծումը,
Ողջակիզման արարողությունը, ՄՄ Հմր 349 Աստվածաշունչ**

Հետաքրքիր է դիտարկել, թե ինչպես են եվրոպական փորագրապատկերները իրենց արտահայտությունը գտել ուշ շրջանի հայկական ձեռագրաարվեստում: Եվրոպական փորագրանկարների ոճով հայկական Աստվածաշնչերի նկարագարդումը սկսվում է ԺԷ.

դարի առաջին քառորդում: Մեզ են հասել մի շարք Աստվածաշնչեր, Ավետարաններ, Խորհրդատետրեր, որոնց պատկերագրությունների համար նախատիպեր են հանդիսացել եվրոպական պատկերները: Եվրոպական արվեստի այս շարժումը սկիզբ առավ Լեհաստանից և անցավ Կոստանդնուպոլիս, Սպահան: Այս շարժման կարևորագույն ներկայացուցիչն էր գրիչ-մանրանկարիչ Ղազար Բաբերդացին¹³: Շարժումը նույնիսկ տարածվեց հայ եկեղեցիների որմնանկարչության վրա, որի լավագույն օրինակը Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի եկեղեցու որմնանկարներն են: Կարելի է ենթադրել, որ դեռևս 1658 թ. Ամստերդամում հաստատված Մաթեոս Ծաբեցու, այնուհետև ջուղայեցի Ավետիս և Ոսկան Ղլիճեցիների կողմից փորագրապատկերների ընտրությունը ոչ թե պատահական, այլ նախընտրելի է եղել հայ գործիչների համար: Չմոռանանք նաև, որ Ամստերդամյան տպարանը հիմնվեց Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի պատվերով ու նախաձեռնությամբ և ֆինանսավորվում էր ջուղայեցի վաճառականների կողմից¹⁴: Այսպիսով ամստերդամյան հրատարակչությունները անմիջականորեն կապվում են Նոր Զուղայի հետ, որի եկեղեցիները 1650-ական թվականներին նկարագրողվում էին եվրոպական տպագիր գրքերի փորագրապատկերների կոմպոզիցիաները կրկնող որմնանկարներով: Հետաքրքրական է, որ այս կոմպոզիցիաների աղբյուրը Քրիստոֆել վան Զիխեմի փորագրություններն են կամ այն տպագիր նախօրինակները, որոնցից վան Զիխեմը օգտվել է, ինչպես օրինակ Ջ. Նադալի պատկերագրող Ավետարանը¹⁵: Տեղեկություններ են պահպանվել, որ Նոր Զուղայի հայ համայնքը կապեր է ունեցել վան Զիխեմ ընտանիքի հետ: Եվրոպացի ճանապարհորդների և տեղացի կառավարիչների թողած տեղեկություններից հայտնի է, որ Մեֆյան Պարսկաստանի շահերը հետաքրքրված էին եվրոպական նկարչությամբ և հաճախ էին հրավիրում հատկապես հոլանդացի նկարիչներին՝ աշխատելու պարսկական պալատում: Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գլխավոր եկեղեցին՝ Ս. Հովսեփ Արիմաթացին, ամբողջությամբ զարդարված է ԺԷ-ԺԸ. դարերի որմնանկարներով, որոնք Հին և Նոր Կտակարանի տեսարաններ են պատկերում: Որմնանկարները ծածկում են եկեղեցու ողջ ներքին տարածությունը՝ հախճասալերից վերև: Իրենց ինքնատիպ ոճով զուգակցում են հայկական մանրանկարչության, արևմտաեվրոպական դասական հաստոցային գեղանկարչության և պարսկական դեկորատիվ արվեստի սկզբունքները՝ հիմնականում հիմք ունենալով իտալական և հոլանդական փորագրապատկերները: Սպահանի նշանավոր Մայդան Շահի խանութներում հայ վաճառականները

¹³ Ղազար վրդ. Բաբերդացին Լվովի Հաճկատար Աստվածածին վանքում Թորոս գրչին պատվիրել է գրել Աստվածառնչը, որը մասամբ նկարագրող է ինքը (ՄՄ 351, Լվով 1616-1619թթ., գրիչ՝ Թորոս դպիր, ծաղկող՝ Ղազար վրդ. Բաբերդացի):

¹⁴ Այս մասին Ոսկան Երևանցին հայտնում է Աստվածաշնչի վերջում թողած իր հիշատակարանում: Ըստ որի՝ 1665 թ. փետրվարի 20-ին Ոսկան Երևանցին Լիվոռնոյում ջուղայեցի վաճառականներ Ստեփաննոս Խանենցի, Թեոդորոս Քթռեցու և Պետրոս Զուղայեցու հետ կնքում է պայմանագիր, որով հիշյալ վաճառականները հանձն են առնում կատարել Աստուածաշնչի տպագրութեան համար պահանջվող ծախսերը «յօգուտ ազգիս եւ ի շահ սրբոյ աթոռոյն»:

¹⁵ Նոր Զուղայի հայկ. եկեղեցիների համար Ք. Վան Զիխեմի փորագրապատկերները որպես սկզբնաղբյուր օգտագործելու մասին առաջին անգամ գրել է **T.S.R Bose** «A 17-th century typological cycle of painting in the Armenian Cathedral at Julfa», journal at the Warburg and Courtauld institutes, 13. 1950, pp. 323-327.

վաճառում էին Վենետիկից ու Նյուրենբերգից բերված գեղանկարներ ու փորագրապատկերներ: Հայտնի է, որ Սպահանում էր պահպանվում Դյուրերի փորագիր պատկերների ճոխ հավաքածուն [Ղազարյան, 1968, 194] (այժմ՝ Փարիզի ազգային թանգարան): Եկեղեցու որմնանակարների մեծ մասը գրեթե նույնությամբ կրկնում են 1646 թ. Քրիստոֆել վան Զիխեմի հրատարակած Bible Sacra-ի փորագրապատկերները, հատկապես Նոր կտակարանի որոշ տեսարաններ (Մոգերի Երկրպագություն, Կույրերի բժշկում, Մուտք Երուսաղեմ, Հեսեի Ծառ, (նկ. 8 ա, բ), Ահեղ Դատաստան և այլն) ուղղակիորեն փորագրանկարների վերարտադրություններն են [Eftekharian-Laporte, 2006, 358]: Տեղեկություններ են պահպանվել, որ Նոր Զուղայի հայ համայնքը կապեր է ունեցել Քրիստոֆել վան Զիխեմ ընտանիքի հետ: Հոլանդիայի վաճառականությունը ԺԷ. դարում կարևոր դեր էր կատարում ոչ միայն եվրոպական, այլ նաև արևելյան երկրների վաճառականության մեջ: Օրինակ 1638 թ. Այդ նույն ընկերության ղեկավար Ադամ Վեստերվոլտի բացի առևտրական փոխանակություններից, նրանք Պարսկաստան են ուղարկել Բարենդ վան Զիխեմ անունով մի գծանկարիչի աշխատանքները: Ըստ հոլանդացի հետազոտող Մարտին Ժան Բոկի՝ Բարենդ վան Զիխեմը եղել է Բ. Վան Զիխեմ երկրորդի որդին [Bok, 2014, 177-205] և հավանաբար, նրա միջոցով են վերջինիս փորագրապատկերները հասել Նոր Զուղա և օգտագործվել Ամենափրկիչ վանքի որմնանկարների պատկերազարդման համար:

Ամստերդամյան հրատարակություններից կարելի է առանձնացնել մոտ մեկ տասնյակ թեմատիկ փորագրապատկերներ, որոնք մեծ տարածում են գտել Կոստանդնուպոլսի, Սպահանի ոչ միայն տպագիր, այլ նաև ձեռագիր Աստվածաշնչերի նկարազարդման շրջանում [Lang, 1969, 622-623]:



Նկ. 4.1 և 4.2 Շարակնոց 1702 թ.,
1704 թ. Կեսարիա, Արծաթյա կրկնակազմ, 16-րդ դար

ԺԷ. դարում Նոր Զուղայում և Կոստանդնուպոլսում նկարագարոված աստվածաշնչերը պատկերագրման տեսանկյունից բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբը նկարագարովում էր Ալբրեխտ Դյուրերի և նրա հետևորդների, այդ թվում նաև Ամստերդամյան հրատարակությունների պատկերների, իսկ մյուսը՝ Թեոդոր դե Բրայի Աստվածաշնչի հիման վրա [Merian, 612-613]: Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռ. 201 (Սպահան, 1660 թ., գրիչ՝ Աստվածտուր, ծաղկող՝ Հայրապետ), ձեռ. 204 (Նոր Զուղա, XVII դ., գրիչ՝ Գասպար երեց, Հարություն դպիր, Սարգիս Վանեցի, ծաղկող՝ Ստեփանոս), ձեռ. 349 (Կոստանդնուպոլիս, 1686 թ., ծաղկող՝ Մաղաքիա Կոստանդնուպոլցի, Մարկոս պատկերահան¹⁶) Աստվածաշնչերում, ինչպես նաև ձեռ. 389 խորհրդատետրում (Սպահան, 1647 թ., գրիչ՝ Աստվածատուր, ծաղկող՝ Հայրապետ Զուղայեցի) զետեղված մի շարք մանրանկարներ իրենց պատկերագրությամբ ուղղակիորեն կրկնում են Ոսկանյան Աստվածաշնչի և Վանանդեցիների հրատարակությունների նույնանուն փորագրապատկերները՝ (նկարներ՝ 1ա, բ, գ, 2ա, բ, 4ա, բ,) հատկապես Հովհաննու Հայտնության նկարագրողումները (նկ. 5, ա, բ, գ, դ), որը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայտնության նկարագրողումների համար նախատիպ են հանդիսացել միայն եվրոպական նախօրինակները, քանի որ հայ գրքարվեստում մինչ ԺԷ. դարը գրեթե չենք հանդիպում Հայտնության պատկերներ [Սիմոնյան, 2016, 63]:

Քրիստոֆել վան Զիխեմի փորագրապատկերները իրենց արտացոլումն են գտել ամստերդամյան հրատարակությունների դրոշմագարդ կաշվե կազմերի, ինչպես նաև ԺԷ-ԺԸ դարերի հայ արծաթագործության, եկեղեցական հարդարանքի, որմնանկարչության մեջ: Օրինակ՝ Կեսարիայի հայ արծաթագործները իրենց պատրաստած կրկնակազմերի ձևավորման համար օգտվել են Զիխեմի փորագրապատկերներից (նկ. 6ա, բ) [Merian, 2013, 117-187]: Ուշ շրջանի հայկական ձեռագրերի և տպագիր գրքերի դրոշմագարդ կաշվե կազմերի վրա սովորաբար պատկերում էին Խաչելություն և Հայտնության Տիրամայր տեսարանները: Քրիստոֆել վան Զիխեմի արվեստում գերակշռում են Հայտնության Տիրամոր պատկերները, որոնք իրեն արտացոլումն են գտել Վանանդեցիների հրատարակություններում: Զիխեմը այդ կրկնօրինակները ստեղծել է Դյուրերի և Հերոնիմուս Վիրերիքսի պատկերներից: Լավագույն օրինակն է Ոսկան Երևանցու 1666 թ. Աստվածաշնչի կազմը:

¹⁶ Աստվածաշունչ, ՄՄ 349: 1686թ., Կոստանդնուպոլիս: Ծաղկող Մաղաքի Կոստանդնուպոլսեցի, Մարկոս պատկերահան (Մայր Ցուցակ Հայերեն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, հատոր Բ, Երևան 2004, էջ 171):



**Նկ. 5.1 և 5.2 Համբարձում, Շարակնոց 1702թ.
Ջերոմ Նադալ, Պատկերազարդ Ավետարան**

Ամստերդամյան հրատարակություններում տեղ գտած փորագրանկարների տպատախտակները արված են շատ մեծ վարպետությամբ, և այդ է պատճառը, որ դրանք հետագայում հանդիպում ենք ԺԷ-ԺԸ դարերի հայ հնատիպ գրքերի նկարազարդումներում (օրինակ՝ Մխիթար Սեբաստացու, Գրիգոր Մարգվանեցու, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, Գրիգոր Խալդարեանց): Այսպիսով կարող ենք ասել, որ Քրիստոֆել վան Զիխեմի արվեստը Ամստերդամի տպարանի հրատարակությունների շնորհիվ իր արտացոլումն է գտել հայ արվեստում:

SUMMARY

In the 16th centuries in the Armenian cultural life, an extremely important event took place, the start of Armenian printing. After the Gutenberg invention, a rapidly developing printing business in Europe drew the Armenian cultural figures' attention. Until 18th century the Armenian printed books were used by the works of European engraving masters, especially the German motifs by Christoffel van Sichem. He was born in 1581 in Basel, died in 1658. in Amsterdam. He was the elder son of Christoffel van Sichem, Carl van Sichem's brother, and the student of the prominent Dutch artist Henri Goltsius (1558-1617). In the 1600's, he lived and worked in Amsterdam. Christoffel van Sichem or "Dutchman Durer" was known as a book illustrator (with about 1200 wooden engravings). He has a number of independent works, the best of which are in the collection of portraits published in Amsterdam in 1609. (Iconica Haeresiarcharum): His illustrations were published in "The Childhood of Christ" printed in 1617, as well as several Bible publications, two of which were published in Amsterdam (1646), New Testament, published in Antwerp (1646), and more. Published

in 1657 Biblia Sacra had 797 images printed by Christoffel van Sichem, most of which were used in the publications of Voskanian and Vanandets. These caricatures are duplicated from famous paintings by Albrecht Durer, Martin van Heemskerck, Abraham Bloemaert and other European masters. Part of Christoffel van Sichem's engraving paintings are also direct copies of the works by Jerome Nadal (1507-1580) from the Illuminated Gospel, the master of the Wierix Famous Dynasty. Christoffel van Sichem's carved the initials of these painters (AD- Albrecht Durer, HG- Henri Goltsius) on his paintings and at the same time putting his signature on CVS. We also note that Christoffel van Sichem, besides the above-mentioned masters, also made copies of famous Flemish Engravers of the Fifteenth Century such as Johann Sadeley, Crispin van den Broeck, Hans Mamling, Marten de Vos, Hugo Van der Goes, Christoffel van Sichem's engraving images have been reflected not only in the Armenian printed book, but also in the 17th century Armenian art of manuscripts, especially in Bibles, as well as frescoes (St. Holy Savior Cathedral of New Julfa), silverware and church outfit.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ենոքյան Ա., Ոսկան Երևանցու տպագիր գրքերի պատկերագրությունը և դրա ազդեցությունը հայ գրքարվեստում // «Ոսկան Երևանցի. Ճամփորդության հայ տպագրության քառուղիներով» գիտաժողովի նյութեր, Երևան, Մատենադարան, 2016, էջ 77-84:
2. Ղազարյան Մ., Նոր Զուղայի ԺԷ դարի հայ նկարչությունը // Պատմա-բանասիրական հանդես, Հ^տ 1, Երևան, 1968, էջ 193-202:
3. Պողոսեան Յովհ., Հոլանտայի հայկական տպարանները // Արեգակ, Լոնդոն, 1966, Հ^տ 28, էջ 4-5:
4. Սիմոնյան Ա., Ոսկանյան Աստվածաշնչի և ԺԷ. դարի հայերեն ձեռագիր աստվածաշնչերի պատկերագրական աղբյուրները, Էջմիածին, Էջմիածին, 2016, Ժ., էջ 61-75:
5. Սևակ Մ.Կ., Թովմա Վանանդեցիի տպարանը Ամստերդամի մեջ // Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 1960, Հ^տ 7, էջ 412-415:
6. Քիրտեան Յ., Փայտափորագրչական մանրանկարչությունը եւ մանրանկարիչներ հայ տպագրութեան մեջ, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1939, 20 էջ:
7. Քիրտեան Յ., Ոսկանի Աստուածաշնչի փայտափորագիր պատկերները, // Սիոն, Կրօնական, գրական, բանասիրական պաշտօնաթերթ, Երուսաղէմ, Երուսաղէմի հայ պատրիարքութեան, 1966, փետրուար-մարտ, էջ 105-111:
8. Bangert W., McCoog T., Jerome Nadal, 1507-1580, Tracking the first generation of Jesuits, Chicago, Loyola Press, 1992, 401 p.
9. Bok M., "European Artists in the Service of the Dutch East India Company" // Mediating Netherlandish Art and Material Culture in Asia, Amsterdam, Amsterdam University Press, 2014 pp. 177-205.
10. Boase T., A 17-th century typological cycle of painting in the Armenian Cathedral at Julfa // Jurnal at the Warburg and Courtauld institutes, The Warburg Institute, 1950, Vol. 13, № 3/4, pp. 323-327.
11. Bryan M., A biographical and critical dictionary of painters and engravers, II Voll., London, Bungay, 1899, 398 p.

12. Buser T., Jerome Nadal and Early Jesuit Art in Rome, *The Art Bulletin*, New York, College art Association press, 1976, September, Vol. 58, № 3, pp. 424-433.
13. Eftekharian-Laporte S., *Le rayonnement international des gravures flamandes aux XVI et XVII siecles: Les peintures murals des eglises Sainte-Betleem et Saint-Sauveur a la Nouvelle-Djoulf* (Ispahan) // Belgium, *Art et histoire de l'art*. Universite' Libre de Bruxelles (U. L. B.) press, 2006, 358 p.
14. Haupt H., *An Introduction to the woodcut of the seventeenth century*, New York, Abaris book, 1977, 282 p.
15. Huntington D., *Sketches of the Great Masters. Albert Durer* // *The Crayon*, 1855, Vol. 1, No. 20 (May 16,), pp. 300-306.
16. Lang D., *New Julfa: The Armenian Churches and Other Buildings* by John Carswell // *Bulletin of the School of Oriental and African Studies*, London, University of London press., Vol. 32, No. 3 (1969), pp. 622-623.
17. Merian S., *Illuminating the Apocalypse in seventeenth-century Armenian manuscripts: The trnsition from printed book to manuscript: The Armenian Apocalyptic Tradition A Comporative Perspective* // *Essays presented in honor of professor Robert W. Thomson on the occasion of his eightieth birthday*. Edited by Kevork B. Bardakjian and Sergio la Porta, Brill, Leiden/Boston. pp. 612-613.
18. Merian S., *Armenian Silversmiths of Kesaria in the sixteenth and seventeenth centuries* // *Armenian Kesaria and Cappadocia*, California, Costa Mesa, 2013, pp. 117-187.
19. Moffitt J., *Francisco Pacheco and Jerome Nadal: New Light on the Flemish Sources of the Spanish Picture-within-the-Picture* // *The Art Bulletin*, Vol. 72, No. 4 (Dec. 1990), pp. 631-638.
20. Reznicek E., *Drawings by Hendrick Goltzius, Thirty Years Later: Supplement to the 1961 "cataloguerai*sonné" // *Master Drawings*, Vol. 31, No. 3 (Autumn, 1993), Amsterdam, pp. 215-278.
21. Wijnman H., *De van Siche*m-puzzle // *Een hijdrage tot de gesehiedents van de Nederlandsche grafische kunst*, *Oud Holland* 46 (1929), pp. 233-244.

FRANGES KRISZTINA

Hungarian National Museum Public Collection Centre
National Széchényi Library

THE ROLE OF PACKAGING TECHNOLOGY IN LIBRARY PRESERVATION: BEST STORAGE PRACTICES AT THE NATIONAL LIBRARY OF HUNGARY

Բանալի բառեր՝ գրադարան, փաստաթուղթ, երկարատև պահպանություն, անխարզելի պահպանություն, փաթեթավորման տեխնոլոգիա, անհատականացված տուփեր, ArtiosCAD, ստեղծագործականություն, i-cut Production Console, կայունություն:

Keywords: library, paper-based documents, long-term preservation, preventive conservation, packaging technology, customised boxes, ArtiosCAD, creativity, i-cut Production Console, sustainability

Since the foundation of the National Széchényi Library (NSZL), it has served as a repository of knowledge and a custodian of Hungarian cultural heritage, making paper-based and electronic library documents publicly accessible.¹⁷ Therefore, it is our duty to preserve¹⁸ our collection in the best way possible for future generations. We have adopted a new sustainable practice to protect cultural heritage objects housed in the national library. In this paper I will discuss our approach to preserving our analogue documents.

First, I will briefly introduce the institution and provide an overview of the library's collection of analogue documents, objects of various shapes, materials and storage needs. Then, I will describe what constitutes a suitable storage solution for valuable documents. Next, I will present how to create specialised housing solutions for our rare and vulnerable objects using mechanised methods. I will provide insights into how we use our packaging technology preparation and implementation station. I will show a few examples of our creatively designed boxes. Finally, I will outline the possibilities and solutions offered by the system. As a summary I will discuss the impact of this innovative solution on further improving the preservation of objects in our collection.

The institution and its analogue collection

The NSZL, Hungary's first public national collection and public institution, was founded by Count Ferenc Széchényi in 1802. Since 2024, it is a member institution of the Hungarian National Museum Public Collection Centre (HNMPCC). The NSZL collects¹⁹, processes and stores the treasures of Hungarian national culture, be they in written, printed, audio-visual or electronic form.²⁰

¹⁷ In: *Mission and strategy*. https://oszk.hu/en/mission_and_strategy (06. 04. 2025.)

¹⁸ Act CXL of 1997 (on Museums, Public Libraries and Public Culture) states that the preservation of cultural property is everyone's duty. [Bakayné Perjés, 2005, 5]

¹⁹ NSZL has the task of collecting all works published within the borders of Hungary, in whatever language they may be written, all works published in Hungarian, all works written by Hungarian authors, or with the collaboration of Hungarians, not in Hungarian and outside Hungary, all works published abroad in foreign languages with Hungarian aspects. In: *History of the Library*. https://oszk.hu/en/history_of_the_library (06. 04. 2025)

²⁰ In: *Mission and strategy*. https://oszk.hu/en/mission_and_strategy (06. 04. 2025)

Since 1802, there has been a legal deposit system in the institution that ensures the most comprehensive collection of documents published in Hungary²¹.

After the library was founded, an increasing number of documents were donated to the institution. The initial collection of the founder included some 13,000 printed books, over 1,200 manuscripts, hundreds of maps, coats of arms, engravings and coins. Back then, the library already had 33 medieval codices. During the 20th and the 21st centuries, the collection continued to grow with the addition of numerous bequests, manuscript volumes, letters, photographs, small prints, and even newer codices and language relics. Today's organised holdings amount to more than 10 million storage units.²²

The library's collection encompasses a wide variety of objects. The composition of the collection can be examined in several ways. While this list is not exhaustive, we can highlight the following categories. The items that build the bulk of the collection are book-like monographic publications, newspapers and periodicals. The collection also includes medieval manuscripts (around 700 codices and 1000 codex fragments)²³, incunabula, modern volume manuscripts and printed books, albums and scrolls. Additionally, the collection contains private letters, small non-book manuscripts (poetry manuscripts, autograph photographs, handwritten invitations, dance cards, business records), and personal fonds. Maps (including the oldest printed map of our country, dating from 1528), raised-relief maps, globes. Leaflets, posters, postcards, music sheets. Photographs, microfilms, glass plate negatives, music records, phonograph cylinders, and other audio-visual and electronic materials. The collection comprises single items, series, multiple volume works, and related objects. Items greatly vary in size, ranging from micro books to double elephant folio size wall tapestries, wall maps, and posters.

The materials of the objects in the collection are also varied. In chemical terms, they are primarily organic materials, which can be either natural or synthetic. In terms of their function, they are substrates that carry written information, surface coatings, coverings, adhesives and decorative materials [Kastaly, 1986, 24]. The objects may be made from or contain materials such as paper, wood, leather, parchment, papyrus, textiles (cotton, velvet, silk), bone, glass, different metals, silicate, wax, glass plate negatives, photographic substrates, and other modern materials including records, filmstrip substances, audio and video tape, magnetic tape, magnetic discs, and more. The documents could be handwritten (pencil, inks, pigments, chalk), printed with ink, or decorated with pigments and gilding.

Preservation of library artefacts, focused on paper-based documents

The library's main objectives are to collect, preserve and provide documents. We need to ensure the long-term preservation of the collections, and their safe storage is of crucial importance. We must handle the objects with care, both in daily use, at digitisation, when they are transported or exhibited. In some cases, the artefacts will require interventive conservation-restoration treatments, but interventions should be minimised or avoided if possible, and preventive conservation measures should be prioritised. Interventive conservation treatments can be time-consuming, and require specialised materials and equipment, and therefore may be expensive. Most importantly, the principle of minimum intervention is now the guiding approach in conservation when it comes to preserving

²¹ In: *History of the Library*. https://oszk.hu/en/history_of_the_library (06. 04. 2025)

²² In: *Történet*. <https://oszk.hu/tortenet> (06. 04. 2025)

²³ In: *Manuscripts*. <https://oszk.hu/en/manuscripts> (06. 04. 2025)

the object. Within preventive conservation, the way in which the objects are stored is becoming an increasingly important topic.

